Խոյզ, խուզից *s.* search, inquisition, inquest, perquisition, research, examination; – *եւ ինդիր*, strict inquiry; – *արկանել, ի – եւ ի ինդիր արկանել* or *լինել, ի – եղանել, անկանիլ*, to search, to examine, to inquire strictly, to pry into; – *եւ ինդիր առնել ումեք*, to be in search of, to trace, to follow the tracks.
Խոյլ, խոլից *s. zool.* crocodile.
Խոյլ, խուլից *s.* swelling, blotch; schirrus, scrofula; – *պարանոցի*, wen, goitre.
Խոյս *s.* flight, running away; – *տալ, առնուլ, լինել*, to fly, to take to flight, to escape, to decamp, to steal or slip away, to break loose; to be guilty of tergiversation; to avoid, to flee from, to shun.
Խոյր, խուրի *s.* cap, diadem, tiara; – *եւրոպական*, hat; – *տաճկի*, turban; – *պապական*, tiara. [maker, hatter.
Խոյրագործ, –արար *s.* cap- or hat-
Խոյրագիր *a.* crowning, covering another's head.
Խոյօղ, աց *s.* hook; pick-lock.
Խոնարհ, աց *a.* low; humble, submissive, respectful; lower, inferior, mean, base, low; feeble, weak; –, *ի – pr. ad.* low; down, down below; downwards; from top to bottom; at the foot of; beneath, below, underneath; below, lower, under; – *առնել*, to humble; – *լինել*, to be humble or meek, to humble one's self; to be humbled; *վերքաս ի – արկանել*, to be sulky or sullen; – *սրտիւք*, lowly in heart; *աչք ի –*, with downcast eyes; *յերկուսմեանից եւ ի –*, from two years old and under; *ի մէջոյն եւ ի –*, from the loins downward; *ի վեր և ի –*, unceasingly, always, at every moment.
Խոնարհաբար *ad.* humbly, submissively. [below.
Խոնարհագոյն *a.* inferior; lower; *ad.*
Խոնարհակոյմն *s.* the lower part.
Խոնարհահակ *a.* inclining, aslant.
Խոնարհամիտ *a.* humble, meek, modest. [abase one's self, to be humble.
Խոնարհամտեմ *vn.* to humble or
Խոնարհամտութիւն *s.* humility, modesty, meekness. [to conjugate verbs.
Խոնարհեմ S. *–եցուցանեմ*; – *զբայս*,
Խոնարհեցուցանեմ, ուցի *va.* to humble, to abase, to subject; to bring down, to lower, to abate, to depress; to bow or bend down, to incline; – *զունկն*, to lend an ear to, to listen to; – *զանձն*, to humble oneself; to do penance, to mortify oneself, to fast; – *զամբարտաւանութիւն ուրուք*, to lower, to abase, to bring down the pride of; – *զԱստուած առ մարդիկ*, to move God to compassion, to implore divine mercy; *Աստուած –նէ զամբարտաւանս*, God humbles the proud.
Խոնարհիմ, հեցայ *vn.* to be humble; to lower oneself, to descend; to yield, to acquiesce; to lean, to bend downwards; to decline; *gr.* to be conjugated; – *յամբարտաւանութենէ*, to descend from one's haughtiness, to have the pride of one's countenance humbled; *յերկիր –*, to prostrate oneself; – *առաջի Աստուծոյ*, to bow before God; – *անկանիլ երեսաց*, to go downcast, to be dejected; – *յԱքեւան ուրուք*, to deign to dwell in; – *յայլս*, to grow old; *–էր օրն*, the daylight fades, the day wanes or is going down; *յոտն եկաց յերեսացն խոնարհելոց*, he rose from his prostrate attitude.
Խոնարհութիւն *s.* humility; deference, submission, humiliation, abasement; baseness, lowness, inclination, declination.
Խոնարհումն *s.* abasement; humiliation; fall, decline; *gr.* conjugation.
Խոնաւ, աց *a.* humid, damp, wet, moist; *s.* humidity. [humid.
Խոնաւալից *a.* full of humidity, very
Խոնաւալոյծ *a.* deliquescent; *–լուծութիւն*, deliquescence. [moist.
Խոնաւական, –ային *a.* humid, wet,
Խոնաւայղյք *s.* damp weather; wet, rainy weather.
Խոնաւանամ, ացայ *vn.* to grow wet, to become damp or moist.
Խոնաւաչափ, ի *s.* hygrometer; *–ական*, hygrometric; *–ութիւն*, hygrometry.
Խոնաւարար *a.* moistening, wetting.
Խոնաւացոյց *s.* hygroscope.
Խոնաւեմ, եցի, –եցուցանեմ, ուցի *va.* to damp, to moisten; to wet, to steep, to bathe.
Խոնաւութիւն *s.* humidity, damp, moisture, wet; humour, radical moisture; – *օդոց*, damp weather.

Խոհաւուտա *a.* S. **Խոհաւ.**

Խոնձ. *l.* – *ad. pr.* below; under; inside, within, in. [drawers & trowsers.

Խոնձան, ուկք *s.* running string for

Խոնջ *s.* fatigue, lassitude; *a.* fatigued, tired, weary, faint, jaded. [some.

Խոնջական *a.* fatiguing, hard, toil-

Խոնջան S. **Խոնձան**; **–ք** S. **Խոնջուիլ.**

Խոնջեցուցանեմ. *ուցի va.* to tire out, to fatigue, to weary. [fatigued.

Խոնջիմ, ջեցայ *vn.* to be tired, weary,

Խոնջութիւն, –ուձի *s.* fatigue, lassitude, weariness.

Խոշիւն *s.* noise, murmur. [*խոպեմ.*

Խոշոր S. **Մարդախոշոշ**; **–եմ** S. **Խոպ.**

Խոշոտ *s.* hay; dried herbage.

Խոշոր, լց *a.* stout; great; thick; rough, rude, rustic, unpolished; awkward, ill-shaped, ill-made; rugged, toilsome, difficult; – *ղգեստ*, coarse cloth; – *ձայն*, rough voice; harsh sound; – *դրոյք*, stiff or unconnected colouring. [lished.

Խոշորաբարք *a.* rude, rough, unpo-

Խոշորագեղ *a.* coarse featured, hard-favoured, ugly.

Խոշորագոյն *a.* very rude, very coarse; **–ս** *ad.* rudely, coarsely.

Խոշորանամ, ացայ *vn.* to grow up; to become stout or bulky; to grow rude or rough.

Խոշորացոյց S. **Մանրացոյց.**

Խոշորեցուցանեմ, ուցի *va.* to magnify, to increase, to make larger.

Խոշորութիւն *s.* coarseness, rudeness, want of politeness; bigness.

Խոշտամ, –անամ S. **Կաղամ.** [ing.

Խոշտանգալից *a.* tormenting, torturing.

Խոշտանգանք *s.* torture, torment, punishment, rack, pain.

Խոշտանգեմ, եցի *va.* to pain, to torment, to torture; to thrash, to beat.

Խոշտար or **Խոտտար** *s.* boy, son; pupil.

Խոչ, լց *s.* obstacle, opposition; embarrassment, inconvenience, difficulty, hitch, hinderance, clog; the spines of the hedgehog; – *խափանարար*, great obstacle, impossibility; *ահա* – *անկոխելի*, there is an insurmountable difficulty; – *եւ խոչ լինել*, to hinder, to clog, to embarrass, to prevent, to be a bar to; *տապալել զամենայն ք– եւ զխոչ*, to surmount the greatest obstacles; S. **Խուճ.** [hobble.

Խոչաս լինել *vn.* to go lame, to

Խոչընդակէն *s.* impediment to the sight; – *լինել*, to put a stop to, to hinder.

Խոչընդոտն, Խոչոտն *s.* obstacle, stop, hinderance, embarrassment; – *լինել*, to oppose, to hinder, to clog, to embarrass. [about.

Խոպամ, ացի *vn.* to leap or frisk

Խոպան, լ *a.* uncultivated; *s.* waste land, desert; *լ* – *լ*, waste, fallow.

Խոպանանամ, ացայ *vn.* to become desert, uncultivated; to lie waste or fallow; to spoil, to deteriorate, to go to ruin.

Խոպանացուցանեմ, ուցի. Խոպանեմ, եցի *va.* to let lie fallow, to leave uncultivated; to lay waste, to spoil, to ruin.

Խոպ, Խոպոպ S. **Խոպոպիք.** [to ruin.

Խոպոպեմ, եցի *va.* to curl, to frizz, to put in ringlets, to crisp; **–իմ** *vn.* to curl one's hair; to fall into curl, to curl of itself.

Խոպոպի *a.* curled; **–ք** *s.* curl, lock, ringlet of hair; **–ս առնել**, to curl, to frizz. [breach, gap.

Խոռ, –ն *s. bot.* iva; – *պարսպի*, **Խոռասպետ** *s.* prime minister.

Խոռեմ, եցի *va.* to hollow out, to excavate. [hole; cavern, den.

Խոռոչ, ոց *s.* hollow, cavity, cave,

Խոռոչանամ, ացայ, Խոռոչիմ, եցայ *vn.* to become hollow, empty, void.

Խոստ *s.* confession; promise; *լ* – *ածել*, to cause to confess; *լ* – *գալ*, to confess, to tell the truth; – *լինել*, to confess one's sins.

Խոստաբանութիւն *s.* promise. [rity.

Խոստակիզարք *s.* descendants, poste-

Խոստանամ, ացայ *vn.* to promise, to engage, to pledge one's word; to vow; to protest; to offer, to proffer; to propose.

Խոստովան առնել, լինել *vn.* to confess, to own, to acknowledge; to make confession, to confess, to go to confession; – *լինել զանձեանս*, to acknowledge one's fault; – *զմեղս իւր*, to confess one's sins.

Խոստովանաբար *ad.* confessedly, avowedly; in confession. [tent.

Խոստովանադուստր, –քոյր *sf.* peni-

Խոստովանադրամ *s.* bribe for confession. [rector of one's conscience.

Խոստովանահայր *s.* confessor, di-

Խոստովանարան *s.* confessional.

Խոստովանեցուցանեմ, ուցի *va.* to confess, to hear confession.

Խոստովանեմ, *եցի*, **Խոստովանիմ**, *եցայ vn.* to own to, to acknowledge, to confess; to protest; to profess; to confess, to make confession; *պարտ է –*, it must be acknowledged; *– զմեղս*, to confess one's sins; *– զպահեցանս*, to acknowledge one's faults; *զպարտուել –*, to acknowledge oneself overcome.

Խոստովանող, *ացս. s.* confessor to the faith.

Խոստովանողի *s.* penitent.

Խոստովանութիւն *s.* confession, avowal, acknowledgment, declaration; *– մեղացս*, confession of sins; *երթալ է –*, to go to confession; *առալ –*, to make confession; *առնուլ զ– ուրուք*, to hear the confession of.

Խոսափոհ *s.* colic, gripes, stomach-ache, pain in the bowels; *– ունել*, to have the gripes; *– լինել*, to confess, to own.

Խոստումն *s.* promise, engagement, obligation; word, word of honour, good faith; offer, tender; protestation, declaration; profession; *– առալ*, to give one's word, to promise; *պահել զ–, կալ ի խոստմանն*, to keep one's word or promise; *չպահել զ–, չկալ ի խոստմանն*, to break one's promise, to fail to keep one's word; *մեծամեծ խոստմունս առնել*, to promise mountains of gold, wonders; *անօգ խոստմունք*, vain or empty promises, fair words only; *սնուցանել խոստմամբք պարապել*, to nourish with vain promises. [note (~).

Խոտովայլին *s. mus.* an Armenian

Խոտ, *ոց s.* grass, herbage, turf, verdure; pasture; *չոր –*, hay, forage.

Խոտաբեր *a.* bearing or producing grass, grassy, herbaceous. [on herbs.

Խոտուբուս *a.* fed on grass; living

Խոտագէտ *s.* herbalist, herborist.

Խոտալից *a.* abounding in grass, full of forage. [getarian.

Խոտակեր *a.* eating vegetables, ve-

Խոտահամբար *s.* hay-cock; haystack.

Խոտաճարակ *a.* herbivorous, pasturing on herbs; *– լինել, շրջել*, to pasture, to feed.

Խոտան, *ացս a.* abject, vile, base, mean, worthless, despicable; *–աբ ad.* meanly, basely, shamefully; in excess; *– առնել* S. **Խոտեմ**.

Խոտանոց *s.* hay-loft. [seller.

Խոտավաճառ *s.* herborist, herb-

Խոտաւէտ *a.* abounding in grass.

Խոտաքաղ *s.* herborizer; *– լինել*, to herborize. [*s.* herbage, vegetables.

Խոտեղէն *a.* grassy; made of grass;

Խոտեմ, եցի *va.* to despise, to contemn, to scorn, to slight, to disdain; to undervalue, to depreciate; *–իմ vn.* to be despised, contemned, disdained.

Խոտոր *a.* oblique, crooked; deluded; strayed, erroneous, wrong; S. **Խոտորնակի**; *– հանել*, to cause to err, to turn aside; *– ելք ast.* oblique ascension.

Խոտորադիտակ *s.* polemoscope.

Խոտորաչափ, *ի s.* declinator.

Խոտորեմ, եցի, **Խոտորեցուցանեմ, ուցի** *va.* to turn aside, to mislead, to lead astray; to divert, to distract; to twist, to contort, to bend, to make awry; *fig.* to lead astray, to cause to err, to delude, to unsettle.

Խոտորեցուցիչ *a.* perverting, turning aside, leading astray.

Խոտորիմ, եցայ *vn.* to turn aside, to deviate, to swerve; to go astray, to lose the way; to decline, to shrink from; to slope, to slant; *fig.* to go astray, to err, to be perverted, to abandon oneself to; to avoid, to shun.

Խոտորնակ, *ացս a.* oblique, crooked, aslant, aslope, athwart, across, transverse; out of the way, indirect; ill-turned, ill-made; bad, perverse, wicked, froward; *s.* cross beam, traverse; *–*, *–ս ad.* obliquely, crossly, transversely.

Խոտորնակի *ad.* obliquely, transversely; at random; confusedly.

Խոտորնակիմ, կեալ *vn.* to slant, to slope; to turn aside, to go astray.

Խոտորութիւն, *–ուման s.* obliquity, crookedness, deviation, declination, winding, sinuosity; turning aside, going astray; *fig.* perversity, error, depravity.

Խոտոց or **Խոտուց** *s. anat.* tibia, shin, shin-bone, shank; articulation.

Խոր, *ոց a.* deep, hollow, excavated; *fig.* profound, deep; *ի – ad.* deeply, profoundly; thoroughly; grievously; *– տգիտութիւն, վէրք*, profound ignorance; deep wound; *խաւար –*, thick, dreadful darkness; *– աղքատութիւն*, profound misery, abject poverty; *– ծերութիւն*, decrepitude; *ի – ձմերան*, in the depth of winter; *ի – ամարան*, in the middle of summer; *պակել ի –*, to excavate deeply; *ի – խուզել, ի –մ*

քննել, to investigate minutely, to examine thoroughly; – ի քուն լինել, to sleep soundly; ի – խոցել, to wound severely, mortally; *fig.* to cut to the heart, to grieve deeply, to break one's heart; ի – խոցիլ, to be touched to the quick, to be cut to the heart; իբրեւ ի – խոցեցաւ պատերազմին, at the hottest moment of the fight; ի – մոռացումն անկեալ, buried in forgetfulness; խաղացի՛ ի –ն, go out to the open sea.

Խորք, ոց *s.* hollow, cavity, pit, depth, bottom; gulph, abyss; – ծովու, the high sea; the open sea; ի խորս *mar.* the offing; – չարեաց, depth of misery or misfortune; – սրտից, the heart's secrets; ի խորոց սրտէ, from the bottom of the heart; ի խորս անտառին, in the depth of the forest; ի խորս քարայրին, at the bottom of the grotto; բանք նորա ի խորս սրտի իմոյ ազդեցին, his words touched me to the quick; – խորհրդոց Աստուծոյ, the inscrutable designs of God; ով – իմաստութեան, o depth of wisdom!

Խորաբանութիւն *s.* enigma; dark saying, profound import, hidden meaning.

Խորագէտ *a.* sagacious, shrewd, judicious; sensible, prudent, cautious; wary, subtil, sly, crafty; ingenious, skilful; – քաղաքավարութիւն, sagacious policy; sly conduct.

Խորագիտութիւն *s.* prudence, shrewdness, sagacity; craft, cunning.

Խորագիր *s.* title (of a book).

Խորագնաց or **–գնաց** *a.* sailing on the open sea, navigating the ocean.

Խորագոյնս *ad.* to the bottom, profoundly, thoroughly. [versed.

Խորագործ *a.* very skilful, deeply

Խորաքննին *a.* scrutinizing minutely; – խուզարկու, accurate observer.

Խորաքննութիւն *s.* inscrutable investigation. [cane; penetrating, acute.

Խորախորհուրդ *a.* mysterious, ar-

Խորախոհ *a.* profound, difficult; enigmatical, obscure; jabbering, talking gibberish.

Խորախոհութիւն S. **Խորաբանութիւն**.

Խորակն *a.* sunken-eyed.

Խորաձոր *s.* deep valley; *a.* profound, difficult, rugged, scabrous; ընդ –ս արկանել զմիտս, to exercise one's mind in inscrutable things.

Խորամանկ, աց *a.* cunning, sly, crafty, knavish, wily, roguish, artful; fraudulent, deceitful, rascally, villanous; malicious; – կեղծաւորութիւն, profound hypocrisy.

Խորամանկեմ, եցի, –կեմ, կեցայ *vn.* to chicane, to quirk, to quibble, to use stratagem and artifice, to deceive, to cheat; to be cunning, artful, fraudulent, knavish.

Խորամանկութիւն *s.* cunning, artifice, craft, chicane, quibble; cheat, deceit, fraud, base stratagem; knavery, roguery; malice.

Խորամիջ, –միջոց *a.* deep & spacious in the center; concave.

Խորամուխ *a.* penetrating, acute, piercing; profound, deep; – լինել, to penetrate, to fathom, to dive into, to enter deeply; – լինել ի ցաւս, to be swallowed up by, to be plunged in grief; – ի հեղեղս խաղալ, to enter too far, to plunge in too deeply; – դրոշմել, to inculcate, to impress deeply on the mind.

Խորամուս *s.* diver; *a.* S. **Խորամուխ**.

Խորայատակ *a.* profound, deep, hollow.

Խորայոյզ *a.* searching at the bottom; – լինել, to search into, to go to the bottom of, to sift, to scrutinize, to investigate.

Խորան, ից *s.* pavilion, tent; vault of heaven; altar; residence, habitation, dwelling; *arith.* table; chessboard, back-gammon board, &c.; – վկայութեան, the Tabernacle; – արքունի, royal palace, court; աւագ –, high altar; *գոգնոց –ի, frontal; – հանդիպել, հարկանել, պարզել զ–, to pitch a tent; բառնալ, ամփոփել զ–, to strike a tent.

Խորանաբնակ *a.* nomad, wandering.

Խորանագործ, –կաւ *s.* tent-maker.

Խորանակից *a.* dwelling in the same pavilion or tent. [encamping.

Խորանահարութիւն *s.* pitching tents;

Խորանաձեւ *a.* tent- or bell-shaped.

Խորանամ, ացայ *vn.* to become hollow or deep; to dive into, to go to the bottom of.

Խորանայաւ *a.* pitching a tent.

Խորանայարդար *s.* architect of the Tabernacle. [or bell-shaped.

Խորանայարկ *a.* vaulted, cupola-tent

Խորանանման S. –աձեւ. [camping.

Խորանաչուք *a.* travelling with tents,

Խորանապահ, *ացի s.* tent-guard.

Խորանարդ, *ացի a.* vaulted: cubical, cubic, hexahedral; *s.* cube; – *երկնից*, vault of heaven; – *արմատ*, cube root; *վերածել ի –*, to cube, to raise quantities, to the third power.

Խորանարդաձեւ *a.* cubiform. [volve.

Խորանարդեմ, *եցի*, to cube, to in-

Խորանաւոր S. **Խորանաքնակ**.

Խորանավիճակ *s.* tent-curtain.

Խորանեմ, *եցի va.* to pitch a tent.

Խորաչափ, *ի s.* bathometer; sounding-line, lead, fathom-line; plummet; *–եմ va.* to sound; *–ուԹիւն*, sounding, bathymetry, measure of depth.

Խորաձգական *a.* guttural. [able.

ԽորաՀուն *a.* very deep, unfathom-

Խորասոյզ, *սուզի a.* sunk deeply, deep; *s.* abyss, gulf, pit; – *աչք*, sunken eyes; – *առնել*, to submerge, to sink to the bottom, to plunge into, to immerse; – *լինել*, to dive to the bottom, to sink; *mar.* to founder; – *ի ցաւս*, sunk in grief; – *ի Թախիծս մեծս*, plunged in remorse. [*նեմ*, *լինիմ*.

Խորասուզեմ, *–ւիմ* S. **Խորասոյզ առնել**.

Խորավէմ *s.* grotto.

Խորաքարշուն *a.* dormant.

Խորաքարմատ *a.* deeply rooted; – *հաստատեալ*, *կանգուղեալ*, to strike deep into the soil, to take deep root, to be deeply rooted.

Խորացուցանեմ, *ուցի va.* to make deeper; to make abstruse, obscure, unintelligible.

Խորափոր *s.* cavity, hollow, cave, cavern, excavation; *–ս հատանել*, to excavate, to hollow.

Խորափոր *a.* deeply excavated, very profound.

Խորաքանդակ *s.* basso-relievo.

Խորաքնին *a.* scrutinizing, investigating; profound, sublime, past finding out.

Խորգ, *ոց s.* hair-shirt, sack-cloth, hair-cloth; *տալ զխորգս –ով*, to repent in sack-cloth.

Խորգազգեաց, *–հանդերձ a.* clad in sack-cloth.

Խորգ, *ոց* or *ուց s. zool.* crane.

Խորգամ, *ացի vn.* to snore; to snort, to rattle in the throat; to roar, to bluster (sea).

Խորգաձուկն *s. zool.* pike.

Խորգաթռիչ *s.* flight of cranes.

Խորգացող *s.* snorer.

Խորգեան *s. pl.* cranes.

Խորգիւն, *–գուման s.* snoring, snore; snorting; rattling, rattle in the throat.

Խորհեմ, *եցի va.* to hollow, to excavate; to fathom; to withhold, to retain; to purloin, to steal, to rob, to embezzle; to peculate.

Խորհող, *ղի* *ց s.* diver.

Խորթ, *ոց a.* step-son, step-daughter; bastard, natural, illegitimate; degenerate, spurious, false; alien, foreign; *zool.* crane.

Խորթաբարոյ, *ից a.* unsociable, morose; capricious, whimsical.

Խորթանամ, *ացայ vn.* to be degenerated, estranged, spoiled.

Խորթացուցանեմ, *ուցի va.* to change the nature of, to adulterate, to corrupt, to debase, to spoil, to impair.

ԽորթուԹիւն *s.* bastardy, adulteration; degeneracy, corruption, decay.

Խորխոց *a.* profound, impenetrable, inscrutable; penetrating, profound.

Խորին *a.* deep, high; impenetrable, abstruse, obscure, hidden, difficult to understand; – *ականողիք*, sunken eyes.

Խորիչ *s.* peculator. [ney-cake.

Խորիսխ, *բոխոց s.* honey-comb; ho-

Խորխ, *ի s.* slough; skin, hide; shell, bark, rind, peel; *spittle, phlegm.

Խորխանամ, *ացայ vn.* to toughen like leather.

Խորխոլիմ, *լեցայ vn.* to fall in, to sink, to give way; – *լուսին s.* falling in, sinking; land-slip.

Խորխորատ, *ից s.* gulf, abyss, chasm, pit.

Խործուխ S. **Խաւարծիւղ**.

Խորհ, **Խորհուրդ** S. **Խոհ**.

Խորհիմ, *հեցայ vn.* to think, to meditate, to consider, to cogitate, to study; to reason, to reflect; to suppose, to judge, to imagine, to fancy; to bring to memory, to call to mind, to recollect; – *ընդ միմեանս*, to consult, to advise together, to deliberate, to concert; – *ի նոտոս*, to meditate on trifles; *խորհիմ մեկնիլ վաղիւ*, I think of leaving, I propose to leave tomorrow; *ի –ն անգամ սոսկամ*, the mere thought of it makes me shudder; *յայն խորհէր հանապազ*, he thought of nothing else.

Խորհուրդ, *հրդեան* or *դի*, *հրդից s.* thought; design, intention, resolution; imagination, fancy, inspiration; sentiment, disposition; idea, fantasy, revery; advice, counsel; deliberation, consultation; secret; mystery; symbol; sacrament; *խորհրդոլգ.* design-

edly, intentionally, on purpose, purposely; *իրկական* –, the Holy Sacrament; *տուն, տաճար խորհրդոյ*, council-hall; – *պալատական*, cabinet council; *խորհրդեան դպիր*, secretary; *չար*, pernicious advice; – *առնել, ի միջ առնուլ, ունել, ի* – *մտանել*, to consult, to determine, to decide on, to resolve on; to deliberate, to confer together, to take counsel, to advise with; – *տալ*, to counsel, to give advice, to advise; – *հարցանել*, to ask advice, to consult, to take counsel; *ի մի* – *միաբանել*, to think together, to deliberate unanimously; *դարձուցանել ի խոր- հրդոյ*, to change or alter one's mind; *դարձուցանել ի խորհրդոյ*, to dissuade from, to advise against; – *ի մտի եդի գիտել*, I had conceived the idea of knowing; – *ի միտս իմ առնէի* or *եդէ*, I thought of, I had the idea or the intention to; – *առաքի ընդ միտս իմ*, I deliberated with myself; – *կալաւ*, he conceived the idea to; *զմանդուկն զայն խորհե- ցաւ* –, he formed the hardy design to; *մինչդեռ յայսմ խորհրդի էր*, in the midst of these thoughts, while thus deliberating.

Խորհրդաբար *ad.* figuratively; sacramentally; mysteriously; confidently.

Խորհրդագէտ, *-գիտ a.* astute, shrewd, wary, cautious; initiated, adept; – *առնել*, to let into a secret, to initiate into a mystery; – *լինել*, to be initiated.

Խորհրդագիտութիւն *s.* initiation.

Խորհրդածեմ, *եցի vn.* to reflect, to ponder, to think, to revolve, to meditate, to consider; to imagine, to form an idea of, to suppose; to consult, to deliberate; to explain, to expound, to comment upon; to administer the sacraments; to celebrate mass.

Խորհրդածու, *ուց s.* thinker; counsellor; the initiated; minister, priest.

Խորհրդածութիւն *s.* thought, reflection; deliberation; secret; mystery; administration of the sacraments; celebration of mass. [mysteries, priest.

Խորհրդակ, *ից s.* functionary in

Խորհրդակից, *ուց a. s.* confident.

Խորհրդական *a.* mystical; mysterious; sacramental; emblematical, symbolical; rational, thinking, prudent; *s.* adviser, counsellor; – *իմաստ*, rhapsody, religious rapture; – *խոստո- վանութիւն*, auricular confession.

Խորհրդականութիւն *s.* deliberation, council, consultation; mystery, sacrament; mysticalness, mysteriousness; wisdom, prudence, wariness, cautiousness.

Խորհրդակատար, *ից a.* accomplishing, performing.

Խորհրդակիր *a.* mysterious.

Խորհրդակից *s.* adviser, counsellor; confident. [centric.

Խորհրդակորոյս *a.* foolish, odd, ec-

Խորհրդակցիմ, *եցայ vn.* to consult, to confer, to hold a parley or conference.

Խորհրդակցութիւն *s.* council, consultation; conference, parley; confid-

Խորհրդանոց S. *-դարան*. [ence.

Խորհրդատահ, *ից a.* secret, discreet, prudent. [discretion, prudence.

Խորհրդատահութիւն *s.* secretness,

Խորհրդատիս *s.* prime adviser or counsellor. [book.

Խորհրդատետր, *ի s.* missal, mass-

Խորհրդատու *s.* adviser, counsellor.

Խորհրդատուն *s.* place of conference, council-chamber; vestry-room; offertory.

Խորհրդատունք *s.* mysteries: orgies, drunken revelry, feasts of Bacchus, bacchanals, drinking-bout.

Խորհրդարան *s.* house of Parliament, hall of Assembly, chamber of deputies: place of administration of the sacramants; offering-place; *fig.* mind, intellect.

Խորհրդաւոր *a.* mysterious, mystical, arcane; figurative, emblematic, symbolical; hieroglyphical; – *նշան, պատկեր*, emblem. [fickle.

Խորհրդափոխ *a.* inconstant, voluble,

Խորձուկ *s. bot.* bryony; tendrils of vine.

Խորճունճ *s.* piece of soiled linen.

Խորշ, ից *s.* corner; compartment, division, pigeon-hole; chess-squares, chequers; niche; cell, partition; nook, lurking-place, hidden corner; hollow, cavity; – *հանդերձից*, fold, plait, crease; – *երեսաց, ճակատու*, dimple; wrinkle, puckering; – *գրաշարաց*, printer's box; – *ծովու*, gulf, bay; creek, cove; – *նաւի*, hold of a ship; – *լերանց*, cave, cavern; – *կենդա- նեաց*, den, haunt, lair; – *թռչնոց*,

eyrie, nest; ի – մի, in a corner; – առ նուվ առագաստից, to swell or fill the sails, to get the wind; – ը-իւ ընդունել, to fold, to plait, to crease; to become wrinkled, to knit the brow; –ս քաղել, to fold variously; –ս –ս գոլծել, to make small rooms or cells: to gather, to plait; –ս արկանել յայտս, to wrinkle, to pucker.

Խորշակ, ացս. excessive heat; hot dry or parching wind, simoon; drought, dryness, aridity; – ժանտ, pestilential blast.

Խորշակահար a. sun-burnt, parched by excessive heat, or by a burning wind; – առնել, to burn, to parch; – լինել, to be burnt, parched.

Խորշակահարուած s. sun-stroke.

Խորշակաւո a. sun-burnt; – լինել, to be burnt.

Խորշանկեմ, եցի vna. to frown, to wrinkle, to pucker: to plait, to fold.

Խորշանք s. aversion, antipathy; **Խորշաւոր** a. cellular. [S. **Խորշուն**.

Խորշաքաղ առնեմ, ժողովեմ va. to plait, to arrange gracefully, to fit, to adjust with elegance.

Խորշելի a. avoidable, evitable.

Խորշէրկեն a. flowing, waving; mar. undulating, flowing gently, rippling.

Խորշէցուցանեմ, ուցի va. to cause to avoid or shun.

Խորշիմ, եցայ vn. to feel an aversion to, to loathe, to turn from with disgust, to avoid, to shun, to eschew, to flee; to be shy, to beware, to show or pay regard to; to be respectful; –յոյն մէքէ, to take a dislike to, to avoid of.

Խորշիւն s. thunder, noise, uproar, rumour.

Խորշխորշան, ացս. plait, double, fold, gather; wrinkle, crease; a. plaited, folded, turned down; wrinkled, puckered. [S. **Խրշմերես**.

Խորշոմեցուցանեմ, եցայ vn. to grow wrinkled, to shrink, to shrivel up; – հանդերձից, to fold, to plait, to crease.

Խորշում s. aversion, repugnance, dislike, reluctance; reserve, caution; regard, respect.

Խորոպ s. the hymen; maidenhead.

Խորոպչին s. gynecæum, harem, women's appartments.

Խորովածս, ի s. roast-meat.

Խորովանք s. earnest prayer, urgent entreaty, lively instance.

Խորովեմ, եցի va. to roast, to toast, to brown; to grill, to broil, to fry; ձուկն –եալ, broiled fish.

Խորովիմ, եցայ vn. to suffer, to be afflicted; to sympathise, to have pity or compassion on; to entreat earnestly: to be roasted; ցրտակէզ –, to be **Խորովուած**. [frost-bitten.

Խորովուիլ, **Խորովք** s. roasting; ի –ս արկանել, to roast, to fry.

***Խորուզակ** s. whooping-cough.

Խորութիւն s. depth, profoundity.

Խորփիկք s. concavity, cavity.

Խորսեմ, եցի va. to make the honey-comb; to fill with honey-cakes.

Խորտաբորտ a. ragged, rough, uneven; –ք s. rough, craggy places, asperity, roughness, unevenness, ruggedness.

Խորտակեմ, եցի va. to bruise, to crack, to break, to crush, to dash to pieces; – զԷշխամին, to crush, to bear down, to defeat, to rout, to put the enemy to flight; – զդունդս, to disband the troops; – զդուռն, to force open the door; – զգլուխ, to break the head; – զմարմինն, զանձն, to mortify one's flesh, to do penance; –կիմ vn. to break, to dash to pieces; to be broken, undone, defeated, destroyed; անդրէն ի քեզ խորտակեսցին ալիք քո, here shall thy proud waves be stayed.

Խորտակումն s. fracture, break, crack; rout, defeat.

Խորտիկ, տակաց s. dish, viand, mess; roast-meat; cooked victuals.

Խորտկարան s. chop-house. [keeper.

Խորտկարար, ացս. cook; chop-house

Խորտկարարութիւն s. cookery.

Խոց, ից or ոց s. wound, sore, ulcer; a. wounded; խորամուխ, կարեվէր –, deep, mortal wound; – ասալ, դնել, to wound; – ունալ, to be wounded.

Խոցահարեմ, **Խոցեմ**, եցի va. to wound, to pierce, to stab; to prick, to smite; fig. to pierce or cut to the heart; – զսպանեցանից, to transpierce, to pierce through and through, to run through; –իմ vn. to be wounded, pierced; – սիրով ուրուք, to be smitten with love, to fall in love; S. **Խոր**.

Խոցոտեմ, եցի va. to wound severely, to cover with wounds; fig. to prick the conscience.

Խոցոտիչ a. wounding, biting, cutting; poignant, tart.

խոցոտումն *s.* act of wounding severely. [**-ումն**, act of wounding.

խոցուած, **ոց**, **-ումն** *s.* wound;

, **խուեմ**, **եցի** *va.* to deal harshly with, to ill-use, to maltreat, to vex, to torment, to trouble, to incommode; to worry, to harass, to annoy.

խուզածք *s.* felt, stuffing, wadding.

խուզակ, **ացց** *a.* searching, scrutinizing; **-լինել**, to search, to examine, to explore, to rummage. [quisitive.

խուզական *a.* curious, searching, in-

խուզարկ, **-ու**, **ացց** *a.* curious, inquisitive; *s.* examiner, searcher, observer, busy inquirer, pryer, scrutator; **-լինել**, to make researches, to seek for, to hunt after.

խուզեմ, **եցի** *va.* to search, to inquire, to seek diligently, to hunt after, to pry into; to shear, to shave; to cut off; to strip off.

խուզուըտիւն, **-ումն** *s.* busy search, curiosity, quest, investigation; shearing; **-ումն հերաց**, shaving, tonsure.

խութ, **խթից**, **խթոց** *s.* obstacle, embarrassment, hinderance; **-ել խոչ լինել**, **խելք եւ - ընդ ոտն անկանիլ**, to hinder, to embarrass, to clog; **ի բաց առնել զխոչ եւ զ-**, to disencumber, to free from embarrassment; **-ք**, rock, reef, hedge of rocks.

խուժ, **խուժադուժ**, **կց** *a.* barbarous, savage, rude; rough, cruel, inhuman; **խուժք եւ դուժք**, the barbarians. [rough.

խուժական, **-ին** *a.* barbarous,

խուժան, **ի** *s.* multitude, populace, the vulgar, crowd; throng, press; hurly burly, confusion, noise, clatter; **- աւերանաց զաշխարհաւն զերծուլ** or **ածել**, to devastate, to lay waste.

խուժդն *s.* obstinacy, stubbornness, pertinacity; **ի խժդան եւ յոխորտի կալ**, S. **խժդան**.

խուժդուժ S. **խուժադուժ**.

խուժեմ, **եցի** *vn.* to invade, to rush on, to fall impetuously on, to flock, to resort in numbers to. [negro.

խուժիկ, **ժկաց** *a.* barbarous; black,

խուլ, **խլից** *a.* deaf; deaf, dead, dull; *eyeless (needle, &c.); **- առնել**, to deafen, to stun; **- առնել զունկն**, **- լինել**, to turn or give a deaf ear to.

խուլակոյր *a.* deaf & blind.

խուլահաւիկ *a.* deaf & dumb.

խուլինջ *s.* phlegmon, inflammatory tumour on the shoulders.

խուլտուըտիւն *s.* cooing of doves.

խուխ, **խխոց** *s.* phlegm, pituite; **թքանել զ-**, **- արկանել**, to expectorate; **- բերել**, to cough up.

խուղ, **խղից** *s.* cot, hut; cell, small room; **- պահնակաց**, sentry-box.

խուղք *s.* filth, sweepings, dirt.

խուճ *s.* scarecrow, bugbear.

խուճապ, **ուճ** *s.* fright, terror, alarm, dread, haste, hurry, precipitation; **-ուճ** *ad.* in haste, in a hurry; **-ք**, phantom, spectre.

խուճապական *a.* alarming, startling, frightful, dreadful; urgent, pressing; precipitate, too hasty.

խուճապանք *s.* alarm, eagerness, haste, precipitation, flight.

խուճապեմ, **եցի**, **խուճապեցուցանեմ**, **ուցի** *va.* to startle, to alarm, to frighten, to terrify, to appal, to strike with terror; to frighten away; to hasten, to precipitate.

խուճապիմ, **եցայ** *vn.* to be startled, alarmed, terrified; to waver, to be in suspense; to be hasty, precipitate; to flee precipitately.

խուճապումն S. **խուճապ**.

խում *s.* drinking, eating; * tin drinking pot; *mus.* an Armenian note (◌̄).

խումբ, **խմբից** *s.* party, band, troop, detachment, company, regiment, brigade, division, cohort, legion; **- կղզեաց**, group of islands, archipelago; **- առնուլ**, to assemble, to flock together; **- կազմել զօրաց**, to muster, to form into a regiment, to embody, to enlist, to enrol, to collect together; **ի խմբէ եօթանց իմաստնոցն էր**, he was one of the seven wise men.

խուն *a.* little; **- ինչ**, **- մի** *ad.* a little, very small quantity, however little; **- ինչ ժամանակ**, a short time; **- ինչ էրք էն**, there is very little; **ի - վայրկենի**, in a moment, in an instant.

խունայար *s. chem.* paraffine. [ing.

խունաւագուխ *s.* seasoning, flavour-

խունկ *s.* incense; aromatic substances; *fig.* incense, flattery; **կարմիր -**, storax; **Հռոմի** or **սպիտակ -**, laudanum; **-ք անուշից**, **անուշունք**, perfumes, fragrant, drugs; **-ս առնել**, **արկանել**, to incense; **- ասել**, to flatter.

խունկեղէգն *s. bot.* sweet calamus.

խունձ *s. mus.* an Armenian note (◌̃).

*խունչ *s.* trunk of a tree.

խուռն, խառն *s.* crowd, concourse, multitude, throng of people; affluence, great quantity; noise, tumult, confusion; *a.* thick, close, dense, crowded; many, numerous; *ad.* in crowds, in throngs; – *առ –, – ի –*, in a huddle, pell-mell, disorderly, hurriedly; *ի խառն*, among the crowd; *ի խառն մարտին*, in the thickest of the fight; – *բազմութիւն*, a numerous crowd, a throng; – *բազմութեամբ մտանել, ելանել*, to crowd in; to crowd out; – *բազմութիւն ժողովրդեան*, immense concourse of people; – *հաւանիւն աստ օտարականք*, strangers flock here.

խուռներամ *a.* in many flocks; in vast numbers; – *փունջ*, nosegay of various flowers.

խուռնբնիթաց *a. ad.* very numerous, multitudinous, in a crowd; conjointly, together; – *բազմութիւն*, concourse, crowd.

խուսակ, *ացի s. mech.* escapement; – *ազատ, պլանաւոր, խարսխաւոր*, chronometer-, cylinder-, anchor-.

խուսափական *a.* evasive, shuffling, ambiguous.

խուսափանք, *–փուն s.* flight, evasion; subterfuge, shift, excuse, tergiversation, shuffling.

խուսափիմ, *եցի*, խուսավիմ, *եցայ vn.* to escape, to flee, to take to flight, to steal away; to retreat, to retire, to disappear; to shuffle, to elude, to tergiversate. [flight.

խուսափու, *–ի a.* fleeing, taking to

խուսափուն S. խուսափանք.

խուսեմ, խուսխուսեմ S. *ծայս տամ.*

խուսեցուցանեմ, *ուցի va.* to cause to escape, to save, to extricate.

խուրձն, *խրձան, խրձունք, ձանց s.* bundle, faggot, bunch, package, packet; – *փայտի*, fascine of wood; – *խոտոյ*, truss of hay; – *ցորենոյ*, sheaf of corn; – *թղթոց*, file or bundle of papers; – *ջոյ mech.* wheat-sheaf jet; *մագնիսական –*, pencil of magnetic

խուց, *խցի s.* chamber; cell. [rays.

խուփ, *–ն, խփան s.* lid, cover; *mech.* cap, head; – *պատուհանի*, shutters.

խոփ, *ոց s.* coulter, plough-share.

խպիպ *s.* wen, goitre.

խռիւ, *խռուոյ s.* bushes, briars, brushwood, underwood.

խռկեմ, *եցի va.* to heap, to pile; to fill, to cram, to stuff. [cow's lungwort.

խռնդատ or խռչտակ *s. bot.* mullein,

խռնեմ, *եցի va.* to assemble, to muster; to collect, to gather; to augment, to enlarge; *–իմ vn.* to assemble in a crowd, to collect or gather together, to flock, to crowd round; *խրճ նէր զնովաւ ժողովրդեան*, the people crowded round him; *խռնեցաւ պատերազմն*, the fight began.

խռնչեմ, *եցի vn.* to emit a gurgling sound; – *շանց*, to howl. [winkle.

խռնչայլ, խռնչուղ *s. zool.* snail; peri-

խռով *s.* confusion, tumult, trouble, disorder, sedition, insurrection; *a.* confused, confounded, troubled; – *հարկանել, արկանել*, to trouble, to cause disorder, to excite sedition, to create factions, to stir up to rebellion; – *կալ, լինել ընդ ումեք*, to have quarrelled with, to fall out, to be at variance, to disagree with.

խռովայոյզ *a.* turbulent, tumultuous, seditious. [bulent.

խռովասէր *a.* restless, unquiet, tur-

խռովասիրութիւն *s.* contentiousness, restlessness.

խռովարար, *–րիւս a.* factious, mutinous, turbulent, seditious, riotous, unquiet, restless; meddling, mischief-making; revolutionary.

խռովեմ, *եցի, –եցուցանեմ, ուցի va.* to trouble, to put into disorder, to agitate; to perplex, to disconcert, to disquiet, to disturb; to upset, to unsettle, to distract; to alarm, to rouse; to stir up, to excite to insurrection; – *զվիսս*, to dispirit, to unhinge; – *զսիրտ*, to dishearten, to unnerve.

խռովեցուցիչ S. խռովիչ.

խռովիմ, *եցայ vn.* to be troubled, disturbed, agitated, perplexed, disquieted, disconcerted; *խռովեալ ես*, you are looking quite confounded, or flurried. [seditious, factious.

խռովիչ *s.* perturber; *a.* disturbing,

խռովութիւն *s.* bustle; perturbation, confusion, agitation, trouble; tumult, disorder, turbulence, insurrection, sedition, revolt, revolution, mutiny, rebellion; – *յուզել*, to foment troubles; *ի –ի են Արեւելիք*, affairs are becoming very serious in the East.

խսւանամ, *ացայ vn.* to dry up, to fade, to wither; to grow old, to become extenuated; *խռոտացեալ հիւղք*,

bristling hair; dishevelled hair.

Խոշոտուկ *a.* bushy, briery.

Խոչակ S. **Խոչափող**.

Խոչակունք *s.* tibia, shin-bone.

Խոչափող *s.* wind-pipe; larynx.

Խոչոտիմ *vn.* to breathe with difficulty arising from diseased lungs.

Խոպոպ *a.* rough, unpleasant, disagreeable; ill-natured, ill-tempered; **Խրիպ** S. **Փսխաթ**. [– *ձայն*, shrill voice.

Խոտաբախ *a.* severe, hard (winter).

Խոտաբանութիւն *s.* harsh, threatening or bitter words.

Խոտաբարդ *a.* severe, harsh, rigorous; *–ուխտ s.* austere, severe character.

Խոտաբեռունք *s.* heavy loads.

Խոտագոյն *ad.* severely, harshly, hardly, rigorously; – *գնալ*, to proceed with severity, to take severe steps, to punish with rigour.

Խոտակեաց, *–կրօն a.* austere, rigid, severe, hard. [ity, mortification.

Խոտակրօնութիւն *s.* austerity, sever-

Խոտաձայն *a.* having a harsh, rough, disagreeable voice.

Խոտամբակ, &c. S. **Խեռ**, &c. [*թէ*.

Խոտամբեր, *–ուխ* S. **Խոտակրօն**, *–ուխ*

Խոտանամ, *ացայ vn.* to harden, to become hard; to be obstinate, to persist; to be severe, rigorous, austere; – *ուխտ*, to treat mercilessly; – *որովայնի*, to constipate, to close the bowels. [ous, high, violent (wind).

Խոտաշունչ *a.* boisterous, impetu-

Խոտապարանոց *a.* stubborn, stiff-necked, pertinacious, opinionative, dogmatic. [wilfulness, stubbornness.

Խոտապարանոցութիւն *s.* pertinacity,

Խոտապինդ *a.* very hard.

Խոտասիրտ *a.* hard-hearted, merciless, inflexible, obdurate, insensible, relentless; *fig.* hardened, impenitent.

Խոտասրտութիւն *s.* hardness of heart, obduracy; pertinacity, obstinacy; *fig.* impenitency.

Խոտավարութիւն *s.* life of privations & hardships, a Spartan existence.

Խոտացուցանեմ, *ուցի va.* to harden, to make hard; to render obstinate; – *զսիրտ*, to render obdurate or callous, to harden the heart; – *զորովայն*, to constipate.

Խոտացումն *s. chem.* cold-hammering.

Խոտացուցիչ *a.* hardening, making hard; – *որովայնի*, astringent, binding,

Խոտաքար *s.* trachyte. [costive.

Խոտաբախ *a.* hard mouthed, intractable, untamable, ungovernable; inflexible, obstinate, pertinacious, impetuous, headlong, fiery, rebellious; – *երիվար*, fiery, spirited, high-mettled steed, courser or charger.

Խոտաբ *ad.* hardly, harshly, roughly, rudely; cruelly, severely, rigorously; rigidly, strictly; – *գնալ ընդ ումեք*, to treat harshly, to maltreat, to rule with a high hand; – *պատուհասել*, to punish rigorously, severely; – *տալ պատասխանի*, to reply harshly; S. **Խիտ**. [branches.

Խոտոտաւեայ *a.* furnished with thick

Խոտոր, *ոյ* or *ի s.* garlic; *պճեղն –ոյ*, clove of –; *վիրաբախաբ հեռի՛ բուրէ զհոտ –ի*, he stank of – fifty yards off; *–ակեր*, garlic-eater.

Խոտորուկ *s.* elephantiasis; venereal disease; *bot.** a Cretan grape; *–ք*, garlic sauce.

Խոտութիւն *s.* hardness; stiffness; roughness, harshness, asperity, austerity, rigidness; rigour, severity, cruelty, inclemency, inflexibility; – *սրտի*, obduracy, hardness of heart; – *բարուց, օրինաց*, severity of customs, of laws; – *կարծեաց*, too great austerity of morals, puritanism; – *որովայնի*, tightness of the bowels, costiveness, constipation.

Խոտական *a.* condensable; *–ութիւն s.* condensability.

Խոտանամ, *ացայ vn.* to condense, to thicken, to grow thick, to coagulate, to congeal.

Խոտաչափ, *ի s. chem.* densimeter, volumometer; *mech.* condensing-engine.

Խոտացումն *s.* condensation, coagulation, concretion, congelation.

Խոտացուցանեմ, *ուցի va.* to condense, to thicken, to coagulate, to congeal.

Խոտացուցիչ *s.* condenser.

Խոտիր, *խոտրոց s.* difference, variety, distinction, disparity, disproportion; *–ք*, prognostic, augury, omen; *առ – մտաց*, according to the judgment; *մի՛ լիցի – ընդ բարին եւ ընդ յոսին*, he shall not search whether it be good or bad; *ոչինչ է – Տեառն տալ բազումս նեղ բազմօք կամ սակաւս ընդ*, the Lord can give the victory to the smaller or the greater number; *աւուրք խոտրոց*, superstitious regard for unlucky days; *ի –ս անկանիլ*, to fall into vain

or superstitious observances; *ընդ կամս անձին խարոյց արկանել զանձն*, to conform oneself to superstitious customs.

խոզեմ, խազտանք S. **խազեմ, խըզմունք**.

խոտեմ, խոտակեմ *va.* to tickle, to titillate; to dazzle, to bedazzle; *fig.* to tickle, to please, to gratify, to delight, to flatter; – *զաչս*, to dazzle the eyes; *–իմ vn.* to be tickled, dazzled; to be delighted, gratified, flattered.

խոտումն *s.* tickling, titillation; dazzling; burning desire, prurience, itching, inciting, lust; *fig.* delight, pleasure.

խուժ *s.* thickness, consistence.

խուժութիւն *s.* condensity, density, [thickness, consistence.

խուպանք *s.* softness, effeminacy; deceit, insidious caresses, dalliance.

խուխլ, խուղանք, խուխեմ, խուզեմ, խուզուն S. **խուզումն, խըզմունք**.

խուրագիտիչ, լից *a.* physiognomist; **խուրական** *a.* ceremonial.

խուրանք *s.* observance, ceremony; superstition; prognostic, augury, omen; oddness, imparity.

խուրեմ, եցի *va.* to distinguish, to discern, to make a difference; to observe rigorously or scrupulously; – *զբարեկամն ի մարգելուզէ*, to distinguish a friend from a fawner.

խուրոյագիւթ *a.* consulting witches.

խուրց, ից *s.* interval, space; division, separation; distinction, difference; – *ընդ մէջ անկանիլ*, to interpose; to interfere, to intermeddle.

խուրցեմ *vna.* to distinguish, to classify.

խուռն S. **խուրանք, խուրց**.

խրախ, լից *s.* rejoicing, cheerfulness, merriment; banquet, feast; *a.* joyful, gay, merry, cheerful; *տուն, տաճար –լից*, banqueting-house, –hall; – *մեծ ուրախութեան առնել*, to banquet; – *առնել*, to make merry, to rejoice; – *լինել*, to rejoice, to be delighted.

խրախակից *a.* that rejoices with, joining in merriment, feasting together; – *լինել*, to rejoice with; to congratulate.

խրախալիւռ *a.* cheerful, merry, joyful, gay, joyous; – *լինել*, to joy, to rejoice.

խրախանամ, ացայ *vn.* to rejoice, to be joyful; to feast, to make merry with.

խրախարան *s.* banqueting-room; place of feasting or entertainment.

խրախարար, ից *a.* feasting, entertaining.

խրախճանակից *a. s.* boon-companion, fellow guest; – *լինել*, to feast together.

խրախճանիմ S. **խրախանամ**.

խրախճանասէր *a.* fond of feasting, of good-living.

խրախճանութիւն, –հանք *s.* feast, banquet, entertainment, festivity; rejoicings, public joy.

խրախոյս, խուսի *s.* shout of encouragement or incitement, encouragement, comfort, incitement; *a.* encouraging, animating; exhorting; – *տալ, մատուցանել*, to encourage, to give heart to or inspirit, to rouse, to excite, to urge on; – *բառնալ, հարկանել*, to shout encouragingly; – *առնուլ*, to take heart, to cheer up, to take courage.

խրախութիւն S. **խրախճանութիւն**; *առնել ումեք –*, to give a banquet to.

խրախուանք *s.* rejoicings, feasting, entertainment; *–նս առնել*, to feast, to hold a feast, to give a banquet.

խրախուանք S. **խրախոյս**.

խրախուսեմ, եցի *vn.* to encourage or excite by mutual shouting, to call loudly, to address with a loud voice; to encourage, to give courage to, to raise the spirits of, to reanimate, to excite, to incite, to embolden; *–իմ vn.* to take courage; – *յոք*, to rely on or confide in.

խրամ, լից or **ոց** *s.* trench, hollow way, ditch; mine or sap; breach, rupture, rent; division, separation; – *հատանել*, to cut a trench; to make a gap; to open a breach; *յորդիս իմ եղեւ –*, there was a gap among my sons.

խրամակարկաս, լից *a.* that repairs a breach; – *առնել*, to repair a breach, to patch.

խրամհատ, ից *a.* breaching, making breaches; separating, dividing.

խրամհատութիւն *s.* the opening a breach.

խրամապահ, ից *s.* trench-guard.

խրամատ, լից *s.* breach, rupture, opening; hollow way, ditch, trench.

խրամատեմ, եցի *va.* to breach; to break, to defeat, to disperse; to exterminate; – *զհամբաւ լաւութեան*, to diffame, to destroy one's reputation; – *զգաղտնիս*, to betray a secret.

խրամատութիւն *s.* breach; crack, crevice; rupture; division, party.

խրատակ, ից *s.* league.

խրատ, ատ *s.* admonition, reprimand, reproof; advice, counsel; caution, remonstrance; discipline, instruction; correction, punishment; **-ք ուղղութեան**, moral maxims; **- չար**, bad advice; evil counsel; **- տալ**, to give advice; to lecture, to admonish; **տալ -ս բարեաց**, to give good advice; **ք-ու դալ**, to devote oneself to science; **ի - առնել**, to educate; to discipline; **չունել զ-**, to be indisciplined, wild, ill-mannered; S. **Թակարդ**.

խրատաբանեմ, եցի *va.* to moralize, to advise, to admonish, to warn.

խրատաբանութիւն *s.* admonition, warning, advice, counsel.

խրատագիր *a.* admonishing by letter; *s.* letter or book of admonition.

խրատական *a.* admonitory, didactic, moral, instructive. [advice.

խրատատեաց *a.* hating, scorning

խրատատու, ից *a.* advising; *s.* admonisher, adviser, instructor.

խրատեմ, եցի *va.* to admonish, to advise, to warn; to instruct, to discipline; to reprimand, to reprove; to correct, to chastise, to punish; **-եալ ի նմանէ**, counselled by him.

խրատիչ *s.* councillor, adviser; instructor; chastiser.

խրատուական, խրատատու, ից *a.* advising, giving advice. [ing.

խրատատուութիւն *s.* admonition, warn-

խրատիմ, եցի *va.* to put on shoes; to lace on boots or shoes.

խրատք, ից *s.* shoe-lace, shoe-string; **լուծանել զ-ս կօշկաց**, to loosen shoe-latchets.

խրեմ, եցի *va.* to thrust in, to plunge; to stick in the mire, to bemire; to run aground, to strand; **-իմ** *vn.* to plunge into, to stick fast in the mire, to run aground, to be stranded.

խրթին *a.* obscure, dark; *fig.* hidden, enigmatical.

խրթնաբան *a.* obscure, enigmatical; **-ութիւն** *s.* obscure language, enigma.

խրթնագրութիւն *s.* short-hand, stenography.

խրթնանամ, ացայ *vn.* to be difficult to understand; to darken, to become obscure; to lose pristine excellence or beauty, to grow dull, to deteriorate, to get spoiled.

խրթնացուցանեմ, ուցի *va.* to darken, to obscure, to dull, to disfigure, to degrade, to spoil; **- զփառս**, to tarnish the glory.

խրթնի S. **խրթին**; **երեկոընեայն -**, Venus, Vesper (the evening star).

խրթնութիւն *s.* obscurity; meanness.

խրխինջ, &c. S. **խինջիւն**, &c.

խրխուր *s.* fragment, relic.

խրձանամ, ացայ *vn.* to become like a bundle, to be bound in a sheaf; **խրձ ածեալ տուտ սիրամարգին**, spread peacock's tail.

խրճիթ, ճիթաց *s.* cell; hut, cabin.

խրճերես *a.* wrinkled, shrivelled or puckered (face).

խոխա, ից or **աց** *a.* imperious, haughty, insolent, proud, arrogant, boastful, supercilious, braggart; *s.* haughtiness, pride, arrogance; **-, -աբար** *ad.* haughtily, proudly, in a bold manner. [haughtiness.

խոխատալի, -լիք, -ական *a.* full of

խոխատաձայն *a.* talking in a lofty or threatening manner.

խոխատամ, ացի, -անամ, ացայ *vn.* to carry the head high, to bid defiance, to bully, to hector, to gasconade, to brag, to laugh to scorn, to rail at, to use insolent language, to swagger, to be disdainful, overnice, to turn up one's nose at, to be proud, pretentious, defiant, arrogant.

խոխատանք S. **խոխատութիւն**.

խոխատասպան *a.* braggart, boastful, insolent, presumptuous, swagger-

խոխատեմ, -ատիմ S. **խոխատամ**. [ing.

խոխատութիւն *s.* gasconade, bravado, empty boast, rodomontade; defiance, insolence, haughtiness; **չզքչանել ի խրոխտմանէն**, to lose nothing of his arrogance. [**-դիչ** *s.* patcher; cobbler.

խոսանդեմ *va.* to patch; to cobble;

խոտ *s. chem.* cinnabar, vermilion; *bot.* dragon's blood.

խոտիւն *s. mar.* stranding.

խոտոք, ոքից *s.* sand-banks, shallows, quick-sands.

խչան *a.* skittish, shy.

խրանոտ S. **խրաչիմ, Շրանոտ**.

խրտուիլ, *-ակ *s.* scarecrow, bugbear; **դոյզն ինչ -**, a mere trifle, a nothing.

խրտուցանեմ, ցի *va.* to scare, to startle; to scare or fright away.

Խրտունչում *s.* start, shuddering.

Խրտչիմ, տեայ *vn.* to be scared, to take umbrage, to shy, to start aside, to take fright, to be restive; *խրտչէին միտք իմացողացն*, it scared the mind, it was too difficult to be understood.

Խցահան, ացի *s.* corkscrew.

Խցանեմ, լայ S. **Խնոտ**; *-ուիմ vn.* to be shut; *խցան բերանք նոցա*, they are put to silence.

Խցանք *s.* cork, stopper, bung, plug.

Խցարդել, Խցաւոր *a.* retired, lone, lonely, solitary.

Խցեմ, Խցկեմ S. **Խնոտ**. [hut, cabin.

Խցիկ, խցիկն *s.* small room, cell,

Խցուածան *a.* obstructive.

Խցումն *s.* stoppage, obstruction.

Խփանեմ, խփել, Խփեմ, խփեցի *va.* to cover; to shut. [milk-pots (cat).

Խփրնկեց *a.* thievishly uncovering

Խօթ, ից *a.* sick, sickly, unhealthy, infirm; *- է*, he is sick. [foolish.

Խօթամիտ *a.* silly, simple; stupid,

Խօթամտութիւն *s.* silliness, foolishness, stupidity, dullness.

Խօթանամ, ացայ *vn.* to be sick, ill, indisposed, unwell, poorly. [sickness.

Խօթապատճառ լինիմ *vn.* to feign

Խօթասիրտ *a.* stupid, dull-witted, idle, lazy, slothful.

Խօթութիւն *s.* sickness, illness, indisposition, infirmity.

Խօլ, ացի *a.* foolish, senseless, inconsiderate, extravagant, rash, absurd; *- առատութիւն*, profusion; *- մանկութիւն*, imprudent youth; *ընդ - ad.* groundlessly, wildly, inconsiderately.

Խօլաբաւտ *a.* foolish; *-ութիւն s.* foolishness, want of judgment or understanding.

Խօլական S. **Խօլ**; *- ախտ*, extravagant desire or inclination; *- երկիւղ*, a panic; *- խնդութիւն*, extravagant joy, sportiveness, wantonness; *-ցնորք*, nocturnal phantoms or spectres.

Խօլանամ, ացայ, Խօլիմ, եցայ *vn.* to go mad; to become unhappy. [folly.

Խօլութիւն *s.* foolishness, nonsense,

Խոհասէր *a.* fond of refined living.

Խօշիւն *s.* noise, murmur, rumour, uproar.

Խօս *s.* cock-crowing; S. **Խօսք**.

Խօսական *a.* eloquent; S. **Խօսուն**.

Խօսակից *a.* conversing with another; *- լինել*, to have an interview, to converse, to talk, to discourse, to have a chat together, to hold a conversation with.

Խօսակիցի S. **Խօսակից լինիմ**.

Խօսակցութիւն *s.* conference, dialogue, conversation, parley, interview; interlocution; discourse. [lour.

Խօսարան *s.* mouth, tongue; **par-*

Խօսեալ, -եցեալ *a.* betrothed.

Խօսելի *a.* speaking, that speaks.

Խօսեցուցանեմ, ուցի *va.* to cause to speak.

Խօսիմ, եցայ *vn.* to speak, to talk, to discourse, to converse; to confer, to treat, to negotiate; to betroth, to affiance; *- լեզուս*, or *ի լեզուս*, to speak many languages; *- եզակի*, to thee-thou; *- ուղիղ*, to speak out, distinctly; *- ի սրտի*, to think, to meditate, to ruminate; *- սպառնալեօք*, to speak threateningly or sharply; *- զքաղաքականութեամբ*, to talk politics; *տալ - զանձնէ*, to be talked of; to get a bad name; *- զուանեքն ի մահ*, to compass a person's death; *- չարութիւն*, to speak ill of, to slander; *ընդ օդս -, յանհնչս ուռելոյց -*, to preach to the winds; to reprove a fool is but lost labour; *- հաւու*, to crow; *նա խօսեսցի առ ի քէն*, he shall be thy spokesman; *- ուանեք զկին*, to betroth, to promise or to give in marriage; *- իւր զկին*, to espouse, to marry; *կոյս խօսեցեալ առն*, a vergin espoused to a man; *խօսեցայց ինձ զքեզ*. I will marry you; S. **Ընդ վայր**.

Խօսնակ, ացի *s.* mediator, intercessor, advocate; messenger, announcer; chanticleer.

Խօսնական *a.* speaking; *s.* mediator.

Խօսնակից *s.* herald, messenger, negociator; flag of truce; *- լինել*, to parley, to negociate, to treat.

Խօսնայր *s.* betrothed, affianced husband, intended.

Խօսող, ացի *a.* speaking, rational; *s.* speaker, orator; *-ութիւն s.* faculty of speech.

Խօսուն *s.* betrothal, betrothing; *ի խօսման լինել, կալ*, to be affianced or betrothed; *խօսման ժամանակ*, interval between betrothal & marriage.

Մօրաքեռադուստր *sf.* cousin, mother's sister's daughter; *–քեռորդի s.* cousin, mother's sister's son; *–քոյր sf.* aunt, mother's sister.

Մօրեղբայր *s.* uncle, mother's brother; *–եօրդադուստր sf.* cousin, mother's brother's daughter; *–եօրորդի s.* cousin, mother's brother's son.

Մօրիճ S. **Մօրական**.

Մօրու, *ից* or *այ sf.* step mother.

Մօրուաձուկն *s.* gray-mullet, sur-

Մօրուանի *a.* bearded. [mullet.

Մօրուաքաղաք *s.* the temple.

Մօրուեղ, *ացս a.* bearded, long- or thick-bearded.

Մօրուս *s. bot.* tuberose.

Մօրուք, **Մուրուք**, *րուաց s.* beard; *աղեքեղկ –*, gray-beard; *ագեղ*, *թաւ*, *անյարդալի –*, a sorry, thick, uncouth or neglected beard; *մօրուքք գալարաձև ծնօտիցն*, to have the face covered with down, or soft hair; *մօրուս արձակել*, to grow a beard; *օր սափրելոյ զմօրուս*, shaving-day; *սափրել զմօրուս իւր*, to shave oneself; to get shaved; *ածելիւ զմօրուս ուրուք*, to shave any one, to trim; *աճեցուցանել զ–ս*, to let one's beard grow; *ծագկին – նր*, his beard begins to grow.

Մօրս, *–անամ* S. **Մօր**, *–անամ*.

Յ

Յ (*he*) *յի s.* the twenty first letter of the alphabet, & the sixteenth of the consonants; *յ*, *յ*, three hundred; three hundredth.

Յաբեթական, *–թեան a.* of or belonging to Japhet; Armenian; *– ազգ*, the Armenian nation, the Armenians.

Յագ, *ոյ s.* S. **Յագուրդ**; *a.* satiated, sated, glutted, cloyed, full; *–*, *ց– ad.* to satiety, to one's fill, to the full; *ց– ուտել եւ ըմպել*, to eat & drink one's bellyful. [**Յագիմ**.

Յագեալ. **Յագեանամ** S. **Յագեցուցիչ**.

Յագեցութիւն, *–ումն s.* satiety, surfeit, repletion; *պատառիկ ի յագեցմանէ*, a burst with eating; *–ուցանեմ va.* to satisfy, to satiate, to sate; *կըշտասպինգ –*, to surfeit, to cloy, to glut, to stuff, to gorge; *– զցասումն իւր*, to vent one's wrath; *–ուցիչ a.* satisfying, satiating.

Յագիմ, *եցայ vn.* to be satisfied, to have one's fill; – *յանչափս or կարի իմն*, to glut, cram or gorge oneself with; *չյագէր ի հայելլս*, he was never tired of looking at; *յագեալ a. chem.* saturated.

Յագութիւն, *–ութիւն*, *–ուրդ s.* satisfying; repletion; satiety, disgust; *ի յագուրդ*, for satiating; *յագուրդ առնել*, to say I have had enough; *ուտել զյագուրդ*, to eat one's fill; *– առնել ագահութեանէ*, to glut one's avarice; *ի – փառամոլութեանէ իւրոյ*, for satisfying his ambition; *յագումն s. chem.* saturation.

Յագչիմ *vn.* to fit, to fit well.

Յադդեմ, *եցի va.* to push, to shove.

Յազած or *–ոյ a.* immolated, sacrificed.

Յազեմ, *եցի va.* to immolate, to offer up, to sacrifice to idols; *–իմ vn.* to be immolated to idols; to feed on meats offered to idols; to profane or render meats unclean by gnawing them.

Յախճապակ, *ացւ*, *–ի*, *կւոյ s.* porcelain, china, chinaware; *–եայ a.* china; *–եմ va.* to cover or ornament with porcelain; *–եալ յատակ*, tessellated pavement; *–եալ յօրինուած*, tessellation; mosaic.

Յախնեցր, *–ագոյն a.* rude, rough, common, vile, low, vulgar, trivial; servile. [city, boldness; S. Յուժդն.

Յախորտ *a.* bold, audacious; *s.* audaci-

Յախուռն *a.* audacious, venturesome, overhasty, inconsiderate, imprudent; *ad.* precipitately, headlong, furiously, impetuously, rashly, at a venture, or random, audaciously, insolently; indiscreetly, without discretion or consideration; *– քաջութիւն*, impetuous courage; *– խիզախել*, to venture headlong, to expose oneself to great peril. [*ad.*

Յախծրն, **Յախրատէս** S. **Յախուռն**.

Յախտիմ *vn.* to fall sick.

Յածախան *a.* roaming, rambling.

Յածանք *s.* diversion, pastime.

Յածնզաձի *s.* piratical coasting vessel, epactroceles.

Յածեմ, *եցի*, *–եցուցանեմ va.* to walk, to take or lead about, to conduct here & there; to veer, to turn about; to circulate; *– զաչս*, to turn, to roll one's eyes; *շուրջ – զաչս*, to glance over, or round about; *տարաժամ զբեբանին –*, to eat out of season.

Յածիմ, *եցայ vn.* to travel, to visit different places, to rove, to ramble, to roam, to wander; to lounge; to stray; to circulate; *– ընդ ծով եւ ընդ ցամաքս*, to travel by sea & land; S. Ընդվայր.

Յածումն *s.* wandering, travelling; circulation; round, turn, walk; agitation.

Յածուն *a.* vagrant, wandering.

Յականեմ, *եցի va.* to look at, to gaze upon, to look intently at; to survey, to watch. (jewel & flower).

Յակինթ, *կինթի*, *ք-աւ s.* hyacinth

Յակնեցակապ *a.* studded or set with hyacinths; *–ք-եայ a.* hyacinthine.

Յակոբիկ *a. s.* Dioscorian; *–քուկ s. bot.* morel or winter-cherry, alkekengi.

Յակովբեան *a.* of Jacob or James.

Յակուլքի *s.* see-saw; S. Ճօճք.

Յակրի, *ւոյ s. bot.* bramble, briar.

Յահ *s. Hebrew. w.* El, Elohim, God,

Յահուր, *–ս* S. **Յախուռն**. [Jehovah.

Յահրանամ, &c. S. **Յանդգնիմ**, &c.

Յաղագս *pr.* for, on account of, for the sake of, in consideration of.

Յաղագարձիմ *vn.* to be impertinent or insolent; to live dissolutely, to give oneself up to debauchery.

Յաղածոյք, *յից s.* salt-provisions.

Յաղեմ, *եցի va.* to salt, to season or flavour with salt.

Յաղիչ *s.* salter.

Յաղումն *s.* salting.

Յաղթ *a.* great, large, huge, enormous, gigantic, vast, immense; strong; powerful, mighty, victorious; much, many, abundant, considerable.

Յաղթաբազուկ *a.* strong-armed; strong, robust, vigorous, very powerful; *–բան a.* convincing, convictive; *–բերձ a.* very high; sublime; *–զգեաց a.* victorious; *–կան a.* triumphal, victorious, triumphant; *s.* triumpher, conqueror, subduer; *– լինել*, to triumph over, to conquer; to excel; *– երգ*, triumphal song, epinicion; *–հասակ a.* of an immoderate height or size, gigantic, colossal; *–հարեմ*, *եցի va.* to conquer, to vanquish, to overcome, to subdue, to subjugate; to oppress, to vex, to torment; *– բանիւ*, to convince, to confound, to abash; *–հարիչ a.* convincing; oppressive; *–հարութիւն s.* defeat, subduing, subjugation; conviction; oppression; *–մարմին a.* large-bodied, big, stout, corpulent.

Յաղթանակ, ացս. prize or premium, palm, laurels; triumph, victory; reward, recompense; a. triumphant; –աբ ad. triumphantly, in triumph; – առնել, to obtain a triumph; – կանգնել ի վերայ, or –եմ; եցի va. to triumph, to receive or obtain the honour of a triumph, to be triumphant, to win the victory, to carry or bear away the palm; to prevail; –ող s. triumpher, conqueror.

Յաղթանդամ a. heavy, strong- or well-limbed, stout, corpulent, gigantic; –ութիւն s. stoutness, corpulency; size, height, tallness.

Յաղթանք s. victory.

Յաղթաջուր a. flowing rapidly, torrential, impetuous.

Յաղթասէր a. eager to win; contentious, quarrelsome, litigious; –սիրեմ vn. to desire to conquer; to delight in strife or quarrelling, to dispute, to contest; –սիրութիւն s. desire of victory; love of contradiction, contentiousness, quarrelsomeness, pugnacity, fractious temper.

Յաղթատուր a. giving the victory.

Յաղթարան s. lists, battle-field; means of victory.

Յաղթեմ, եցի va. to vanquish, to overcome, to conquer, to subdue, to subjugate; to surpass, to excel, to prevail over; – պատերազմի, to conquer, to triumph; – յաւոցն, to overcome or master one's grief or sorrow; – ամ դժուարութեց կամ հնարհակաց, to overcome all sorts of difficulties, to surmount every obstacle; – անձին, կամ կրից անձին, to conquer oneself, to get the victory over self; to overcome or subdue one's passions; – ի դատաստանի, to gain one's cause.

Յաղթեցուցիչ a. rendering triumphant over.

Յաղթիկս, Յաղթող s. victor, vanquisher, conqueror; a. triumphant, victorious, glorious.

Յաղթողական S. Յաղթական.

Յաղթութիւն s. triumph, victory, success, advantage; S. Յաղթանդամութիւն; կատարեալ –. decisive victory; ունել, տանել, տանիլ ը–, to get the victory, to carry the day, to be victorious, to prevail over, to get the better or the mastery of; ի բա–վանդակ ունել or տանել ը–, to obtain a complete victory; մեծապանծ –ս ի դլուխ տանել, to gain great advantages over; կանգնել –ս ի վերայ, to triumph, to be triumphant.

Յաղթուկ s. S. Յաղթիկս; trump at cards, (turk. դօղ).

Յաղթումն S. Յաղթութիւն.

Յաղկիմ, եցայ vn. to get spoiled, to be corrupted, decomposed.

Յաճախ, ացս a. frequent, continual, incessant; prolix, long; much, full, copious, abundant; ad. frequently, often, continually; too much, too many; –ք s. continuity, perpetuity; հացք –ից, shew-bread.

Յաճախաբար S. Յաճախ ad.; –գոյն, –ս ad. very often, several times; –գունդ a. powerful, very numerous; – զամբաւ, numerous army, innumerable throng; –դութ S. Բազմագութ; –կան a. frequentative; –կի S. Յաճախ a.; –պաշտ, –պաշտօն a. where religious ceremonies frequently take place; –պատում a. narrating many things; dogmatical; s. Stromata; –պէս S. Յաճախ ad.; –սեաս լինիմ vn. to appear in public frequently; –ւոր S. Յաճախ a.

Յաճախեմ, եցի va. to do often or frequently; to redouble, to multiply, to augment, to increase, to enlarge; vn. to frequent, to haunt, to visit often; to augment, to increase, to grow; to abound, to be plentiful, to superabound, to redound; to continue, to endure, to last, to remain.

Յաճախեցուցանեմ S. Յաճախեմ va.

Յաճախիմ, եցայ S. Յաճախեմ vn.

Յաճախող, –խորդ, ացս. frequenter; customer; –ութիւն s. custom, business.

Յաճախութիւն, –ումն s. frequency; abundance, great quantity or number, heap, redundance, affluence; frequenting, haunting.

Յամ, ցս. delay; –ով ad. late.

Յամայր a. long; – ամս, ամաք, for a number of years, for many years; կեցցես – ամս, may you live many years! live for ever!

Յամառ, ացս a. obstinate, stubborn, selfwilled, wilful, headstrong, sullen, restive; tenacious; –անամ, ացայ, –եմ, եցի, –իմ, եցայ vn. to remain obstinate, to grow stubborn, to be stubbornly bent on, to be headstrong, refractory, obdurate; to persist in, to insist, to be bent on; –կոտ, –ոտ S.

Յամառ; **-ութիւն, -ուն** *s.* obstinacy, stubbornness, restiveness, selfwill, prejudice, perverseness, fanaticism; stiffness, harshness, tenaciousness, obduracy; **-թեամբ** *ad.* obstinately, wilfully, stubbornly, obdurately.

Յամբայր *ad.* totally, entirely, quite; rashly, imprudently.

Յամբայր *ad.* out of the way, unseasonably, beside the question.

Յամեմ, եցի, -ենամ, եցայ *vn.* to delay, to retard, to defer, to remain, to procrastinate; to tarry, to stay, to dally, to loiter, to lag, to while; to wait, to be patient; **- ի գինւոջ**, to continue drinking; to remain long over one's cup; **- ի հաղորդութիւն**, not to receive often the Holy Sacrament.

Յամեմ, եցի, -եցուցանեմ *va.* to retard, to defer, to delay, to put off, to procrastinate; **տէր իմ յամի զ'գալ**, my lord delayeth his coming.

Յամենուստ, Ա.մենուստս *ad.* on all sides, from all parts.

Յամերաժամ *a.* eternal, perpetual, everlasting, endless; **-ս** *ad.* for many years, for ever & ever.

Յամիր, մուրեայ *s.* wild goat; antelope.

Յամուն, -ուրդ *s.* delay, stop, stay, retarding.

Յամպար, Ա.մպար *s.* amber-gris; *bot.* (purple) sweet-sultan, mimosa farnesiana, acacia.

Յամր *a.* tardy, slow, long; sluggish, dull; *ad.* slowly, tardily, leisurely; sluggishly.

Յամրաքայլ *a.* slow-going; **-լեզու, -խօս** S. **Ծանրալեզու**; **-ծին** *a.* born late; **-հաւատ** *a.* slow of belief; **-նամ Ց. Յամեմ** *vn.*; **-շարժ** *a.* slow-moving; **-քայլ** *a. ad.* with tardy or sluggish steps, slowly; **- ընթանալ**, to go slowly, to go with slow & cautious steps.

Յամրկաղ *a.* very slow, very tardy.

Յամրընթացեայ *a.* slow-going; *s.* landcarriage, carriage by waggons.

Յամրութիւն *s.* slowness, tardiness, delay, retardation; sluggishness, idleness.

Յայ *s.* hue & cry, hoot, hooting, whoop; **յայ յոյ առնել, վաշ եւ յայ կարգալ, հայ հուչ առնել**, to hoot, to whoop, to ridicule, to scoff; to treat roughly, to molest, to importune.

Յայգորեմ, *better* **Ա.յգորեմ, եցի** *vn.* to wish any one good morning; to go to salute or compliment a person every morning; **ժամ -ելի**, the hour of audience; **տեղի -ելի**, hall of audience.

Յայգման *ad.* early, very early, at day-break.

Յայծռեմ *vn.* to leap with joy.

Յայկապարծուց *ad.* unawares, unexpectedly.

Յայնժամ *ad.* then, at that time, just then; **-ու** *a.* of that time.

Յայնկոյս *pr. ad.* over, on, on the other side, beyond, on that side; **անցանել -**, to cross over, to pass by, to go beyond; **անցանել - Ա.յրարատայ**, to pass Ararat; **անցանել - Եփրատայ**, to cross the Euphrates; S. **Կոյս**.

Յայնմ հետէ, - վայրի, &c. S. **Հետէ, Վայր**, &c.

Յայսկոյս *pr. ad.* here, on this side, this way; **- յայնկոյս**, on this side & on that, from one side & the other, here & there; **այն - եւ այն յայնկոյս**, some this way some that, some one way, some another; **հայեցեալ - յայնկոյս**, having glanced around; S. **Կոյս**.

Յայտաւուրք, ցաց *s.* legends, menology.

Յայտ հետէ *ad.* hereafter, henceforward, henceforth, from this moment or hour, for the future.

Յայտ վայրի. **Յայս տակս** S. **Վայր**.

Յայտ, ից *a.* evident, clear, manifest, plain, palpable, obvious; *ad.* evidently, obviously, plainly, clearly, manifestly; *s.* S. **Յայտնութիւն**; **- է, - իսկ է**, it is evident, clear; **- ինն է**, naturally, of course, certainly; **այս - է զի**, it is certain that; **ապա - ուրեմն է**, it is therefore clear that; **- or ի - գալ**, to appear, to be manifested, made known, evident, to be discovered or disclosed; **- արձել, առնել**, to declare, to make manifest, to display, to put or set forth, to shew, to prove; to signify, to name; **- առնել ընդունելութիւն**, to acknowledge the receipt of.

Յայտագրեան, -կան *a.* evident, apparent, plain, visible, manifest, clear; expressive, significative; **-նախատ** *a. ad.* blamed in public or publicly reproved; **- առնել**, to reprove openly; **- լինել**, to be publicly insulted; **-տկատ** *a.* visible, plain, evident; **-նշան** *a.* expressive, significative; **-նոյն** *a.* conspicuous, eminent, renowned, celebrated, famous; **-պատկեր** *a.* representing, expressive; **- պարզ**, portrait, sta-

tue; *-պատում a.* narrated or narrating clearly; expounding clearly; *ad.* evidently, clearly; *- առնել,* to narrate clearly; to explain, to expound; *-րան a.* declarative, explanatory.

Յայտարար, ացս a. declaratory; distinctive, characteristic; *s.* demonstrator; *arith.* denominator; exponent; *-ութիւն s.* declaration, exposition, manifestation, notification, statement or account; manifesto, manifest; prospectus, programme; *- առնել,* to make a manifestation.

Յայտերեւակ a. very well known.

Յայտյանդիման pr. before, in the presence or face of, in front of; *ad.* S. **Յայտնապէս**; *a.* notorious, publicly known, sensible, visible, evident; *- ցուցանել,* to expose, to explain, to make evident; *- խայտառակել,* to make a show of openly; *-ակաց a.* visible, palpable, notorious, evident; *-ութիւն s.* manifest proof, evidence, notoriety; *-թիւ ad.* openly, publicly, manifestly, visibly.

Յայտնաբան a. expounding, explaining, exposing; clear, perspicuous, obvious, plain; *-եմ, եցի va.* to explain, to expound, to expose, to illustrate, to make clear or evident; *-իչ s.* expounder, interpreter; *-ութիւն s.* explanation, exposition; *-բար* S. **Յայտնապէս**; *-բարբառ a.* speaking or spoken openly, manifestly; *- վկայութիւն,* undeniable or decisive witness or testimony; *- խօսել,* to speak openly, to speak out plainly; *-գոյն* S. **Յայտնապէս**; *-կան a.* manifest, declaratory, expressive; *-հնխաա* S. **Յայտա-**; *-պէս ad.* evidently, manifestly, clearly, obviously, palpably, visibly; notoriously, publicly, openly, overtly; intelligibly, explicitly; without disguise, frankly, freely, boldly; *-աւոր a.* apparent, evident, public, visible to all.

Յայտնեմ, եցի va. to reveal, to disclose, to discover, to unveil, to unmask, to publish a secret, to make public; to manifest, to declare, to explain, to expound, to set forth, to state, to expose; to signify, to notify; to utter, to express; *- զինաս, զինքս ծանր իւր.* to manifest one's designs, intentions, thoughts or opinions, to declare oneself, to speak out; *- զանձն,* to manifest oneself, to make oneself known.

Յայտնի a. evident, clear, manifest, notorious, recognizable, obvious, explicit, apparent, palpable, visible; *ad.* S. **Յայտնապէս**; *- է,* it is clear, it is evident, that is of course; *- լինել,* to be manifest, to appear; *- առնել,*

Յայտնիչ a. enunciative. [to manifest.

Յայտնութիւն s. evidence, manifestation, enunciation; disclosing, unveiling; apparition; revelation, Apocalypse; Epiphany, Tuelfth-day, --night; coming, appearing of our Lord; divine oracle; *ծածուկ -ք,* the Apocrypha. [*թիւ.* **Յայտնապէս.**

Յայտնուն. **Յայտնօրէն** S. **Յայտնու-**

Յայրատ, ից or *ացս a.* impudent, immodest, wanton, unchaste, lecherous, lascivious, lustful, lewd, obscene; - or *-ս ad.* impudently, unblushingly, immodestly, lewdly, lustfully, obscenely.

Յայրատաբաց a. unblushing, shameless, brazen-faced, impudent, immodest; *-հայեաց a.* obscene-eyed, staring at impudently; *-նամ, ացայ vn.* to be devoid of modesty, to behave impudently, to lead an unchaste life; *-աւս* S. *-հայեաց.*

Յայրատիմ, եցայ S. **Յայրատանամ.**

Յայրատութիւն s. immodesty, lasciviousness, lust, lewdness, obscenity.

Յանգ, Յանկ, ացս s. term, end, finish; rhyme, cadence, numbers, termination, ending, desinence, harmony; *a.* convenient, suitable, congruous, becoming, apt, fit, adapted; quiet, good, kind, sweet, pleasing; *- լլանել, հասանել,* to be finished, accomplished; to expire, to end, to bound, to terminate; *- հանել, տանել,* to bring abont, to succeed in; to complete, to put an end to, to finish.

Յանդագոյն a. in a proper manner, seasonably, becomingly, befittingly; *-կան a.* rhymed; accomplished, finished, ended; *-կից a.* well suited to one another, having affinity with, analogous, similar; *-չէշտ* S. **Շեշտոլոր**; *-պատկ* S. **Պարոյկանուն**; *-ասեղծ, ից s.* rhymer, rhymster; *-ւոր* S. **Յանգ a.**; *-ւորիմ vn.* to finish, to end; *-ւորութիւն s.* accomplishing, fulfilling.

Յանգեմ, եցի, -եցուցանեմ va. to complete, to finish, to end; to render

suitable, to adapt, to accommodate; to appropriate; to accord; to put into rhyme.

Յանգեմ, եցի, -գիմ, եցայ *vn.* to be ended, finished, bounded; to drive at, to tend to, to come to, to be reduced, to dwindle, to result; to discharge, to flow or to fall into, to empty itself.

Յանգուած *s.* S. **Ընկուած**; rhyme, termination; **-աւոր** *a.* well-worked or made.

Յանգութիւն *s.* relation, affinity, conformity, similarity; fitness, suitableness.

Յանգումն *s.* end, termination, close, conclusion; cadence; repose, rest; meeting, rencounter; **- ածել, բերել, առնել,** to put an end to, to finish, to terminate; **գալ ի -, գալ - կատարեալ լուծիւ,** to be perfected, to arrive at perfection.

Յանգուշն *ad.* S. **Հանգուշն**.

Յանդուցանեմ, ցի *va.* to draw on, to win, to attract, to charm, to captivate, to reconcile, to conciliate, to appease, to calm; to conclude, to terminate, to finish; **յինքն - գսիրս**, to steal hearts, to win, to conciliate; **յինքն - գոք**, to win or bring over; **-ուցիչ** *a.* attractive, alluring, engaging, insinuating, winning, prepossessing.

Յանձիմ, գեայ *vn.* to be attached or affectioned to, to get fond of, to conceive an affection or liking for; to repose, to cease.

Յանդգնաբար, -գոյնս *ad.* boldly, impudently, saucily, daringly, rashly, hardily, precipitately, audaciously, temerariously; **-գործ** or **-բար** *a.* acting rashly; **-խօս** *a.* speaking audaciously.

Յանդգնեմ, եցի, -եցուցանեմ *va.* to render impudent or rash, to embolden.

Յանդգնիմ, եցայ *vn.* to dare, to be bold enough, to be audacious to do or say any thing, to have the hardihood or boldness to, to arrogate, to presume, to grow insolent or saucy; to venture, to attempt, to run the risk.

Յանդգնութիւն *s.* audacity, boldness, rashness, temerity, hardihood; impudence, sauciness, insolence, arrogance, presumption; licence, too great liberty; frolic, youthful pranks; **-ք եւ տե** S. **Յանդգնաբար**.

Յանդիման *pr. ad.* before, in the presence of, in the face or sight of, hard by, against, opposite, over against, in the view of, in the face, publicly, in public; **դէմ -**, face to face; front to front; **- իմ**, before me, in my presence; **- եկեղեցւոյ**, in face of the church; **- ամ՝ ՅԵՐ**, in the face of the whole world; **- ամենայն**, publicly, before all people; **ասել -**, to say to one's face; **- առնել, կացուցանել, ածել**, to present, to offer, to introduce, to represent, to exhibit, to set before the eyes, to shew, to remonstrate; **- առնել**, to reprove, to reproach, to blame; **- լինել, կալ**, to present oneself, to appear, to make one's appearance before, to shew oneself; **- մատչել, կալ**, to appear before.

Յանդիմանախօս *a.* saying to a person's face, in the presence of; contradicting, opposing; **-խօսութիւն** *s.* speaking face to face, dialogue, confabulation; **-կայ** *a.* opposed, present; *ad.* before, face to face; **- առնել**, to show, to prove, to demonstrate, to explain; **-կայութիւն** *s.* proof, argument, demonstration; reproach; **-կան** *a.* reprehensive, reproving; evident, manifest; **-կայ** *a.* present, assisting, in the presence of; *s.* assistant; **-կացութիւն** *s.* the being present, assisting, presence; proof, demonstration; **-մերժ** *a.* repelling or rejecting advice, spurning or despising admonition, insolent, insubordinate; **-պէս** *ad.* openly, obviously; evidently, clearly; **-տես** *a.* seeing face to face, clearly; **-բար, ացս** *s.* presenter; **-բարութիւն** *s.* presentation; **-հար** *a.* apparent, plain, visible, evident; reproachful, reproving.

Յանդիմանեմ, եցի *va.* to reprehend, to reprimand, to blame, to reproach, to cast in one's teeth, to chide, to rebuke sharply, to revile, to rate, to scold; to present, to represent, to show, to demonstrate, to discover, disclose or unveil; to prove, to convince; **-իմ** *vn.* to be reprehended, reproached, chided; to be presented; discovered; convinced.

Յանդիմանիչ *s.* fault-finder, censurer, admonisher; discover; demonstrative.

Յանդիմանութիւն *s.* reprehension, reprimand, admonition, correction, reproach; invective, scolding, chiding; representation, exposition; proof,

demonstration, manifestation, statement; *ջուր –թէ*, bitter water; *fig.* the waters of bitterness.

Յանդուգն, դգունք a. rash, foolhardy, audacious, adventurous, hardy, resolute, determined; *ad.* rashly, inconsiderately, audaciously, arrogantly, presumptuously, insolently, haughtily, petulantly; hardily, resolutely, determinedly.

Յանդգայիմ, եցայ vn. S. *Անդգայիմ*; to be or become apathetic; to be out of one's senses.

Յանիրաւ ad. unjustly, wrongfully, wrongly, unreasonably, iniquitously, illegally.

Յանհնայ S. *Անհնայ*.

Յանկ, Յանկա..., &c. S. *Յանգ, Յանգա...* &c.

Յանկարծ a. sudden, unexpected, unforeseen; *ad.* unawares, unexpectedly, suddenly, on a sudden, abruptly, all at once; *int.* please God! would to God! may it please God; *– եթէ*, if by chance.

Յանկարծաբաց a. suddenly opened; *–բուխ a.* gushing forth unexpectedly; *–գիւտ a.* unexpectedly discovered; *–գոյն* S. *Յանկարծ ad.*; *–գործ a.* done suddenly; *–դէպ a.* happening unexpectedly, unforeseen, unexpected, unhoped or unlooked for; extraordinary, fortuitous, casual, accidental; *ad.* unawares, suddenly; by chance, fortuitously; *–զեղ անձրեւ s.* shower; *–թափ ad.* all at once, suddenly, impetuously, precipitately, inconsiderately, rapidly; *–ժողով a.* unexpectedly called together or assembled; *–խօս s.* improvisatore; extemporary speaker or poet; *–խօսեմ, եցի va.* to extemporize; to speak extemporally; to get up at a moment's notice; *–խօսութիւն s.* extemporizing; extempore speaking; improvisation; *–ծագ a.* shining forth or appearing suddenly; *–ծին a.* happening suddenly or unexpectedly; momentaneous, of short duration; *–կան a.* unexpected, unlooked for, unforeseen; *–կի a.* sudden, unexpected, unforeseen, unthought of, abrupt; *–, –ին ad.* unawares, unexpectedly, quickly, suddenly, abruptly, all at once; *–հաս a.* happening unexpectedly, coming by chance, unlooked for, unexpected; S. *Յանկարծ ad.*; *– չտապ տագնապի, երկիւղ*, violent fright, panic, panic terror; *– մահ* or *օրհաս*, sudden, unexpected death; *–մահ a.* dead suddenly; *s.* sudden death; *– լինել*, to die a sudden death; *–շարժ a.* moved or moving suddenly; *–յաստուծմէ լինիմ vn.* to be passionate, hasty, irascible.

Յանկարծերեւեայ a. momentarily seen. [*–ծօրէն* S. *Յանկարծ ad.*

Յանկարծոյն, –ծումժամու, –ծուստ

Յանկարծօրեայ S. *–ծական*.

Յանկարծս ad. without suspicion, confidingly. [&c.

Յանկաւոր, Յանկեմ, &c. S. *Յանգ–*, *Յանհնարիցն է, Յանհնարից գոյ v. imp.* it is impossible, it can't be done.

Յանձանձաբար ad. providently, carefully, diligently.

Յանձանձանք s. care, pains, solicitude, assiduity; management, gestion, expedition.

Յանձանձեմ, եցի va. to take care of, to pay attention to, to be careful of; to provide for, to protect, to treat with much care; to manage, to administer; to expedite.

Յանձանձիչ s. careful person, provider, protector, manager, director.

Յանձն a. recommended; *Ով –!* God be with you! Adieu! *– է, եղեւ, եղիցի, եղեալ v. imp.* to resign, trust, submit, abandon or recommend oneself to; *– առնել* S. *Յանձնեմ*; *– առնուլ*, to assume responsability or care, to undertake to, to oblige or pledge oneself to do anything; *չառնուլ –*, not to accept, to deny, to refuse, to reject, to disallow; S. *Անձն*.

Յանձնաժողով s. commission; *անդամք –ոյ*, the members of the –; *– կարգել*, to appoint or name a –.

Յանձնապաստան a. presumptuous, arrogant, presuming, self-conceited, confident, consequential; *– լինել* or *–իմ vn.* to presume too much on oneself, to be self-conceited, arrogant, to trust to, or to rely on oneself, to assume a consequential air or look, to arrogate, to pretend to; *–ութիւն s.* presumption, self-conceit, consequentialness, arrogance; *–իւր ad.* presumptuously, consequentially, arrogantly.

Յանձնառական a. acceptable, worth accepting or taking; voluntary, avowed, accepted; *– պատուիրան*, positive precept; *–ու, ացս s.* commission-agent, factor; *–ուիչ s.* acceptance, ac-

ception, consent, engagement, avowal, approbation. [ment.

Յանձնավարձք *s.* commission-pay-

Յանձնաւորար, *ց* *s.* employer; principal; **–ական** *a.* in commission or recommandation; **– ժողով**, commission; **– թուղթ**, letter of recommendation; **– – քահանայից**, dimissory letter; **– – դեսպանաց**, credentials; **–ուի** *s.* commission, order; recommendation; mission; delegation; solicitation; **–եմ**, **եցի** *va.* to commission. [give a command.

Յանձնիկ, *ց* *s.* order; **– առնել**, to

Յանձնեմ, **եցի** *va.* to recommend; to deliver, to commend, to put or give into the hands of, to deposit; to resign, to leave; to intrust, to confide, to trust, to rely on; to impose, to charge, to order.

Յանձնկալութիւն *s.* acceptation.

Յանուար, *ի* *s.* January. [jansenism.

Յանսենեան *s. a.* jansenist; **– աղանդ**,

Յանտաստ S. **Ընդառաջ**.

Յանց, *ից* *s.* fault; sin; **–ական** *a.* subject to sin, guilty, culpable.

Յանցանեմ, **ցեայ**, **ցուցեալ** *vn.* to commit a fault, error or crime; to transgress, to trespass, to sin; to fall in error, to fail, to do amiss, to stumble, to go astray; to abuse, to offend, to give offence, to wrong, to injure; S. **Թերեմ**.

Յանցանք *s.* transgression, fault, wrong, offence, error, fall, sin, trespass, crime, delinquency; **իմով –նօք**, through me, through my fault; **–նս համարել ումեք**, to impute as a crime to; S. **Ընկեցուած**, **Թերեացուցանեմ**.

Յանցաւոր *a.* faulty, guilty, delinquent, culpable, criminal; **– օրինաց**, transgressor, violator, criminal, delinquent; **– զանձն դաւանել**, **խոստովանել**, to confess one's fault, to plead guilty; **–ութիւն** *s.* culpability, transgression.

Յանցեմ, **եցի**, **եալ** S. **Յանցանեմ**.

Յանցեցուցիչ S. **Յանցուցիչ**. [**ցանք**.

Յանցուած, **ոց**, **–ուէ**, **–ուիս** S. **Յան-**

Յանցուցանեմ *va.* to cause to transgress or to sin, to induce to crime; **–ուցիչ** *a.* causing sin.

Յաչս, **ից** *s.* idolatrous sacrifice or oblation; **–ածին** *a.* born through a sacrifice; **–արար** *s.* sacrificer, pagan priest.

Յաչող, **ոյ** *s.* fascination, evil-eye, charm; **– or –անք** *s.* envy, rancour; ill-will; **–եմ**, **եցի**, **–իմ**, **եցայ** *vna.* to envy, to be envious of, to pine away with envy, to be eaten up with envy; to bear malice, to disparage, sneer or rail at, to attack through ill-will or malevolence; **–կոտ**, *ց* *a.* envious, jealous, malicious, malivolent; fascinating, bewitching, enchanting; **–ուի –ուիս** S. **Յաչեցանք**.

Յապահով *a.* sure, safe, secure, out of danger, assured; *s.* security, safety; place of safety, shelter; **–ս լինել**, to be in security, safe, sheltered; **– or –ս առնել**, to assure, to secure.

Յապահովապրեմ *va.* to secure, to insure, to assure; **–պրող** *s.* insurer, underwriter; **–պրութիւն** *s.* insurance, underwriting; **մուրհակ –թեան**, policy of insurance; S. **Յապահովութիւն**.

Յապահովանամ, **ացայ** *vn.* to be sure, certain, assured, tranquillized.

Յապահովացուցանեմ, **–ւեմ**, **եցի** *va.* to assure, to reassure, to tranquillize, to remove a person's fears; to guarantee, to give security for.

Յապահովութիւն *s.* security, safety, surety, certitude; quiet, tranquillity.

Յապաղ *a.* very patient, very hopeful, long-suffering.

Յապաղանք *s.* delay, hinderance, retardation; adjournment, putting off, procrastination; **առանց –նաց** *ad.* without delay, forthwith, immediately, instantly, at once.

Յապաղեմ, **եցի** *va.* to defer, to put off, to procrastinate, to prorogue; to retard, to hinder, to stop, to protract, to delay; to prolong, to lengthen; to temporize; S. **Յապաղիմ**.

Յապաղեցուցանեմ S. **Յապաղեմ** *va.*; **–ուցիչ** *a.* retarding; hindering.

Յապաղիմ, **եցայ** *vn.* to delay, to tarry, to remain; to linger, to loiter, to be late. [suspensive.

Յապաղիչ *a.* delaying, prorogative,

Յապաղկոտ *a.* tardy, slow; loitering; temporizing.

Յապաղութիւն, **–ուիս** *s.* delay, hinderance, impediment; putting off, delaying, protraction, procrastination, prorogation, respite; temporizing.

Յապայ, **առ** – *ad.* afterwards, next; S. **Ապա**.

Յապանաս, **Յայպանաս**, *ի* *a.* despising, scorning, contemning; *s.* despite,

disdain; outrage; – *առել*, to injure, to outrage, to affront; to curse.

Յապատանք *s.* retrenchment, cutting off, suppression, diminuition; mutilation.

Յապատեմ, *եցի va.* to retrench, to curtail, to diminish, to cut; to mutilate, to castrate; to cut off, to abridge; to suppress; – *զաւելորդ ուղիշս*, to prune, to lop, to trim, to cut; – *ըզծառս*, to detruncate; – *զթեւս*, to clip a bird's wings; – *զհեծս*, to shear, to clip; to shave; – *զականջս*, to crop ears; –*իմ vn.* to be pruned, cut off, &c.; – *զերեսաք* or *առ երեսաք*, te be close shaven. [trenchant sword.

Յապատիչ *s.* pruner, lopper; *սուր* –, **Յապատումն** S. **Յապատանք**.

Յապուրակի *ad.* hastily, in a hurry, suddenly, quickly, at once.

Յաջող *a.* favourable, propitious, advantageous, prosperous, commodious; – *է*, it is favourable, &c.; it is time, it is the favourable moment; – *ելք*, happy issue.

Յաջողաբախտ *a.* lucky, fortunate.

Յաջողակ, *ացի a.* adroit, clever, skilful, expert, capable, apt; industrious; nimble, expeditious, quick, alert; S. **Յաջող** & **Ձեռն**; –*աբար ad.* adroitly, dexterously, cleverly, skilfully, expertly, capably; –*ութիւն s.* dexterity, address, cleverness, aptitude, ingenuity, ability, skill, expertness. [handed.

Յաջողաձեռն *a.* S. **Յաջողակ**; lucky-

Յաջողապէս *ad.* prosperously, happily, commodiously.

Յաջողեմ, *եցի va.* to prosper, to make prosperous, to favour, to second, to facilitate; to direct, to govern; to do, to operate, to act; –*եալ մեզ ըստ բազդի տեսանել*, we were so fortunate as to see; –*իմ vn.* to prosper, to be prosperous, successful or fortunate, to have great success, to thrive, to succeed in, to contrive to, to get on prosperously, to reach or attain one's aim, to come to a good issue, to terminate propitiously; – *ի վերայ զաւելորդ կայութիւն* or *վկարծիս*, to succeed against all probability; *ոչ* –, *չ*–, to be unsuccessful, to fail, to miss one's aim, to be baffled, to miscarry, to be greatly disappointed; *յաջողեսցիս*, *յաջողեսցի քեզ*, you will fully succeed; all will be well with you.

Յաջողուածք, *ոց s.* prosperity.

Յաջողութիւն *s.* success, prosperity, good luck or fortune, thriving, happy state of affairs; efficacy, virtue; convenience, leisure, ease; opportunity, occasion; –*ք*, achievements, exploits, heroic acts; –*ք ad.* successfully, with success; – *ի դէպ գալ ումեք*, to be favoured, befriended; – *ըստ բազդի չեալ նմա*, fortune befriended him, he had the fortune to; S. **Ըմպեմ**.

Յաջողումն S. **Յաջողութիւն**; – *տալ*, to ensure the success of.

Յաջորդ, *ացի s.* successor; heir, inheritor; *a.* following, next; succeeding, subsequent, posterior; –*ք*, posterity; –*աբար ad.* successively, consecutively, one after the other; –*ական a.* successive, consecutive; –*եմ*, *եցի va.* to cause to succeed, to replace; – or –*իմ*, *եցայ vn.* to succeed, to come after, to follow next, to take the place of; to inherit, to stand next heir; to follow, to ensue, to result, to spring or proceed from; –*ութիւն s.* succession; inheritance; continuation, order, series; – *իրաց*, series of affairs; – *ապեսից*, *եղեռնութեաց*, succession, concatenation, series of misfortunes, of crimes.

Յառաջ, –*ս s.* front, front part, fore part; *a.* previous, former, prior, anterior; *ad.* before, in front, over-against; previously, formerly, heretofore; first, at first, at the commencement; –, *եւ* –, afterwards, at a later period, in the sequel, eventually; – *քան pr.* before, ere; – *քան զարեւն*, before the sun was; – *ք զամ*, first, first of all, in the first place, before all things, first & foremost; – *ժամանակաւ*, anciently, formerly, long since, in days of yore; *ժամու* –, an hour before; – *եւ զկնի*, before & behind; *ոչ* – *ոչ զկնի*, neither before nor behind; – *կայս*, forward; – *բերել*, to bring before, to present; to produce, to cause, to engender, to occasion; to allege, to adduce, to quote, to cite; – *բղխել* or *գալ*, to derive, to come or proceed from, to emanate; to ensue, to result, to be produced or born from; – *անցանել*, to make progress, to improve; – *ունել*, to present for choice; – *առնուլ*, to adduce, to draw, to bring; – *կալ*, *կալ* –, – *մատչել*, to

present oneself, to come forward; – *առաջել*, to advance further; – *հեռանալ*, to precede, to escort, to convoy; – *յառաջացնել*, to cause to advance or to progress; to raise, to elevate, to promote; to bring to an issue; – *երթալ*, to advance, to gain ground, to progress, to improve; – *ածել*, to continue, to go on; – *վարել զբանեան*, to gather up the broken thread of conversation, to continue, to go on to say, to proceed in a discourse, to resume; *անդր եւս* – *առնել*, to push beyond, to stretch too far; – *արկանել*, *–ի դնել*, to propose, to put forward; – *խակ ասացի*, I said already.

Յառաջաբաժին *s.* privilege, prerogative, special grant or endowment.

Յառաջաբան, *եցի s.* preface, prologue, preliminary dissertation, prefatory discourse, preamble, exordium, prelude, prolegomena; *a.* speaking first; *–եմ, եցի vn.* to speak first; to open the proceedings; to make a preface or introduction; to give as a specimen; *–ութիւն s.* S. **Յառաջաբան**; the being the first to speak; prediction; *–բերական a.* pronounced, uttered; *–բերեմ* S. **Յառաջ բերեմ**; *vn.* to be produced; to advance, to progress; *–բերութիւն s.* presentation; preposition, propounding; pronunciation, utterance.

Յառաջագահ *a.* placed in the chief seat, seated in the highest place; *s.* president; *–ք*, precedency, primacy, the first, highest or most honourable place; *–գէտ a.* foreknowing, prescient; instructed beforehand; forewarned; *–գիտութիւն s.* prescience, foreknowledge; *–գիր a.* written beforehand; *–գիւտ a.* known or discovered precedently; pre-eminent; *–գնաց a.* preceding, foregoing, antecedent; *–գոյն a.* anterior, previous, precedent, former, prior; *ad.* before, heretofore, beforehand, antecedently, previously; formerly, anciently; – *աւուրքք*, some days before; – *քան*, before; *ի –գոյ նէ*, a priori; *–գոյութիւն s.* pre-existence; *–գուշակ* S. **Նախա–**; *–գրեմ va.* to write about or treat of antecedently; *–գրեալ a.* predicted, foretold; aforesaid, above mentioned.

Յառաջադաս *a.* prior, placed before, having the precedence; pre-eminent; foregoing, precedent; *–եմ*, &c. S. **Նա խադասեմ**, &c.; *–էմ a.* advancing, progressing; improving, making proficiency; *ad.* forward; *s.* coryphæus; proficient; – *է*, he is advancing in his studies; *երթալ – եւ մեծանալ*, to improve; to increase in prosperity; *երք առնն – յաջողէին*, that man prospered greatly; *– լինել* or *–իմ vn.* to advance, to go forward, to progress, to make progress, to profit, to succeed; *–իմութիւն s.* advancement, progress, improvement, amelioration; *–իր a.* placed before, propounded; *–իր եմ, եցի va.* to set before, to propound; to propose; *vn.* to purpose, to project, to devise, to form a design or resolution; *–իրութիւն s.* proposition; design, project, intention.

Յառաջախաղ, *–ացa.* foregoing; progressive; – *գունդ*, advanced guard, vanguard; *–խաչացութիւն աստեղաց*, course of the stars; *–խոհ a.* premeditating, deliberating beforehand; premeditated; – *լինել*, to premeditate; to provide; *–խոհութիւն s.* previous deliberation, premeditation; *–խօս a.* foretelling, predicting; presuming to speak first; pert, petulant, saucy, rash; *–խօսութիւն s.* prediction, prophecy.

Յառաջածագ *s. mech.* resultant; *–ծանօթ a.* foreknown, predicted, foreseen; *–ծանօթութիւն s.* foreknowledge, foresight, presage; *–ծեմ, ծի va.* to produce, to create; *–ծու, ուց s.* producer, author; *–ծուած s.* production, creation.

Յառաջակամ *a.* predisposed, spontaneous; *–ութիւն s.* predisposition, spontaneity; *–կառոյց a.* built or constructed previously; *–կատար a.* Perfect from all eternity; done or finished before; *–կարգ a.* pre-ordained, destined; decreed; first in order; *–կարգութիւն s.* first building or construction; *–կարկառ a.* prominent, jutting or leaning out; *–կաց a.* present, assisting; first in order or rank, primary, principal, chief; coryphæus; *–կոյն s.* the first place; the front, the fore part; *–կրթակ a.* familiarized or tamed beforehand.

Յառաջակայեաց *a.* provident, prudent, cautious; – *լինել*, to foresee; *–հաս a.* arrived before or first; *–պատիւ* or *–ուն s.* prerogative, privilege; *–հաւատ a.* believing first of all men;

-հոգակ, &c. S. Նախահոգ, &c.

Յառաջադայն a. predicting, prophesying; predicted, prophesied; **-եմ** va. to predict, to prophesy; **-ութիւն** s. prediction, prophecy; **-ձգութիւն** s. promotion, advancement; **-ձիգ**; S. **-կարկառ.**

Յառաջամարտ, -ութիւն S. **Յառաջաբաժին**; **-մատոյց** a. standing forward, presenting or offering oneself, eager, forward, earnest, assiduous; s. competitor; **- լինել**, to advance, to present or offer oneself, to be forward, eager, warm; **-մարտս** s. skirmish, brush; **-, -իկ** or **-իչ** s. skirmisher; champion; **- զօրաց**, the flower of the army; **-միտ** a. generous, liberal; voluntary; **- լինել**, to offer, to give freely or spontaneously; to be full of good-will, ardour or eagerness; **-մուխ** ad. in pushing forward, in advancing; **- բերել**, to open a way through & advance before all; **-մուտ** a. going in or entering before; **-մտութիւն** s. eagerness, good-will, cheerfulness.

Յառաջանամ, ացայ vn. to advance, to go or move forward, to precede, to walk on; to advance, to progress, to improve; to have beginning, rise or origin, to be born; **-նիստ** S. **Նախագահ**; **-նշակ, -նշուն** s. the Passover; the Paschal lamb. [cursor, guide.

Յառաջաւարիչ a. preceding; s. pre-

Յառաջաչափ s. the first rule or regulation.

Յառաջապահ, աց s. advanced post, sentry, sentinel; out-post, -picket; **- դիտաւոր** mar. look-out man, sentry; **-պահեստ** s. preservative, precaution; a. preservative, precautionary; **-պատուեմ** va. to prefer, esteem or honour more; **-պատում** a. announced, narrated beforehand.

Յառաջասաց, -եալ a. predicted, foretold, prophesied; **-ութիւն** s. prediction, prophecy; **-սուն** a. fed or brought up beforehand; **-սուեղծ** S. **Նախասուեղծ.** [hand.

Յառաջավարտակ a. working before-

Յառաջառեմ va. to advance, to surpass; - or **-ախեմ, եցայ** vn. to advance, to progress, to improve; to outstrip, to surpass, to excel; to push into, to penetrate; **-տես, աց** a. foreseeing; provident; S. **Ձգուշութիւն**; **- լինել**, to foresee; **-տեսութիւն** s. foresight, prevision; **-տեսուչ** a. provident; **-տուչ** s. S. **Յառաջադիմութիւն**; *arith.* progression; **- հասակի**, growth, increase; **- ի պատուի**, promotion; **ի վատթարն -**, getting worse, deterioration; demoralization. [beforehand.

Յառաջացոյց a. shewing or shewed

Յառաջաքաղքերթ a. big-, pot- or tun-bellied. [**ութիւն** s. prescience.

Յառաջգիտական a. foreknown; **-գի-**

Յառաջեմ, եցի vn. to precede, to forego, to go or march before; to be or get before, to advance, to move or go forward; to arrive before, to anticipate; to govern, to lead, to guide; **ժամացոյց իմ -ջէ**, my watch goes too fast; **-ջի գործն**, the work is progressing.

Յառաջիպիսկոպոս s. archbishop.

Յառաջիցուցանեմ va. to advance, to push on, to urge on, to bring or drive forward, to accelerate, to quicken; to cause to advance, to help on.

Յառաջընթաց a. foregoing, preceding, previous, antecedent, precedent; s. fore-runner, precursor, outrider; antecessor, predecessor; **- լինել**, to precede, to forego, to fore-run, to outride; **-ընծայ** a. offered beforehand; s. first fruits; *fig.* the first proselyte.

Յառաջխոհ a. provident.

Յառաջխաղացութիւն s. advancement; artistic progress; **-իոսութիւն** s. pre-

Յառաջնդութիւն S. **Յառաջաձ-**. [diction.

Յառաջմղութիւն s. *mech.* propulsion, propelling.

Յառաջնիմ ad. in the beginning, primitively; **-նումն** ad. first, firstly; antecedently. [cess.

Յառաջնորժութիւն s. progress, pro-

Յառաջոյ, -ջու ad. before, in time past, formerly; **-ջուստ** ad. before, on the front or front part.

Յառաջսարկաւագ S. **Նախաս-**.

Յառեմ, եցի va. to hold or stretch out or forth; to push or drive in, to cause to enter or penetrate, to fix in; **- զաչս** or **զակն**, to look at fixedly, to rivet one's gaze on, to gaze earnestly on, to have the eyes fastened upon; **- զդէմն ընդ պատուհանն**, to face, to come to the window, to look out, to present oneself, to appear; **- զձեռս**, to stretch forth one's hand; **-իմ** vn. to stretch out the head to see; to stretch, to extend, to thrust; to fasten or stick on, to be fixed or fastened on, to heed,

to dwell on; – *մտաք, ի խորհուրդս*, to contemplate, to speculate upon, to meditate or consider attentively, to penetrate, to examine thoroughly; – *յոք, յառեալ կալ* or *հայել յոք*, to fix the eyes or the gaze on a person; – *ի դուզնաքեայս*, to be fond of trifles; *աչք իւր անքթիթ յառեալ կային ի քաջսն*, his eyes were fastened on that brave man.

Յառնեմ, յարեայ, արի, յարուցեալ *vn.* to rise, to arise, to get up, to rise or stand up, to rise again; to awake, to be roused, to wake out of sleep; to resuscitate, to come to life again, to live again; – *ի մեռելոց*, to rise from the dead; – *ի վերայ, – ընդդէմ, – ոսոխ հակառակ ուրուք*, to rise against, to rebel or stand up against, to revolt, to mutiny; *անդրէն –*, to rise anew, to get up again; *յարեաւ միւս եւս խընդիր*, another question arose; *արի*, arise! *ան արիք*, get up! *արիք ընդառաջ նր*, go to meet him; *յարեաւ յաթոռոյն*, he rose from his seat, he got up from his chair.

Յառնումն ի վերայ. assault, attack.

Յառուամ, ացայ, ուիր S. **Յառիմ.**

Յառուամն *s.* gazing, stare; contemplation. [samine, jasmine.

Յասմիկ, ումի, –մին or **–մի** *s. bot.* jes-

Յասպիս, պեայ, –պիս, պոյ *s.* jasper.

Յաստուածայ *ad.* from God, of God.

Յատակ, աց *s.* bottom; pavement; floor; ground, earth; the buttocks; – *հայրենի* or *հայրենեաց*, native land or country, birth-place, home; – *գետոյ*, canal, bed of a river; – *աղիւսակերտ*, brick pavement; – *սալայատակ*, stone pavement; – *նաւուս*, keel of a ship; *առ –ս կործանել, քանդել, մինչեւ յ– or –ս*, to raze to the ground, to level or lay even with the ground, to demolish, to raze or pull down; to sap, to undermine; *լի լինել գետոյն յամ –ս եւր*, to be swelled very high, to rise, to swell beyond, to overflow.

Յատակաբաց *a.* of which the bottom or bed is exposed; – *բաժանել զծով*, to divide the sea & lay bare its bed; *–բուղխ a.* growing straight; *–ագիծ s.* plan; *առնուլ զ– քաղաքի*, to trace or take the plan of a town; *–նամ vn.* to freeze, to be frozen; *–ուր a.* solidly bottomed; paved.

Յատակեմ, եցի *va.* to raze to the ground, to cast down, to dismantle, to cast to the earth, to overthrow, to destroy, to demolish utterly; *fig.* to exterminate, to annihilate, to kill, to cause to perish; to pave, to flag, to cover with pavement.

Յատակընթացք *s.* practicable road.

Յատակիճք *s.* dregs, lees, sediment; S. **Պրուր.** [tor; paviour.

Յատակիչ *s.* destroyer, extermina-

Յատակումն *s.* paving.

Յատանեմ, տի, Յատեմ, եցի *va.* to prune, to dress, to lop, to trim, to clip. [dresser.

Յատանող *s.* pruner, lopper, vine-

Յատկաբանութիւն *s.* idiom, idiotism; *–բար ad.* properly, specially, particularly, expressly, precisely; *–կան* S. **Յատուկ** *a.*; *–նամ, ացայ vn.* to be appropriated, separated, dintinguished; *–պատում a.* precise, narrated in detail, detailed, particularized; *–պէս* S. **Յատկաբար**; *–ցուցանեմ va.* to appropriate, to appropriate to oneself, to make one's own; *–ցուցիչ s. gr.* genitive or possessive case.

Յատկեալ *a.* own, essential.

Յատկութիւն *s.* property, attribute, particular, peculiarity, peculiar character; *– լեզուի*, the character or genius of a language.

Յատոց, ից, Յօտոց *s.* pruning-knife, –bill, hedge-bill, bill-hook.

Յատուկ *a.* proper, own, particular, special, peculiar, private; essential, natural; alone, separate; singular, unexampled, alone of its kind; cutting, sharp, taunting (answer); *ad.* S. **Յատկաբար**; *– անուն*, proper name.

Յատուցումն *s.* pruning, lopping.

Յար *a.* adjacent, adjoining, contiguous, next, attached, joined; equal, conformable; *ad.* always, continually, incessantly; *– եւ նման, – եւ յարմար*, quite alike, resembling; *– միանգամայն*, all at once; *– եւ եւ*, *– եւ հանապազ*, successively, often, frequently, very often, many times.

Յարաբարդ *a.* heaped up; *gr.* compound of three words; *–եմ va.* to heap up, to agglomerate; to compound; to add; *–ութիւն s.* heap, accumulation; addition; *–բարձր a.* very high; *–բաց a.* ever-open; *–բերական a.* relative; *–բերեալ a. gr.* antecedent; *–բերութիւն s.* relation, analogy, connexion, affin-

ity, dependence, pertinence; *ունել –*, to relate to, to concern, to belong to, to be connected with; *–բորբոք a.* ever-burning, inflamed; *–բուխ* S. *Աշտա–*; *–բուսիկ a.* ever-springing, ever reviving; *–գայ* S. *Անպակաս*; *–դեմ, եցի va.* to insolate, to expose to the sun or to the open air; to hang; *–դիմ vn.* to be near or present, to assist; *–դոյ a.* always present; inherent, innate, inborn; *–գոյութիւն s.* presence; *–գումն s.* insolation; *–գալար a. s.* evergreen; *–դիր a.* adjacent; *–դրաբար ad.* continuously; *–դրական a.* apposite, addible; affixed; *–դրեմ, եցի va.* to appose, to set, to subjoin, to add, to append, to affix; *–դրութիւն s.* apposition; addition, annexation; combination, composition; *–զուարթ a.* ever merry, cheerful, joyous; *–զուարճ a.* ever-pleasing; always green; *–զօդ s.* alloy, alloying; *– տառից տպագրութիւն*, type-metal; *–ժամժաւ a.* always soiled or sullied, dirty; *–ժռաղ a.* always flying, fluttering, or hovering; *–ժամ a.* continuous, assiduous; *ad.* at every hour, at all times, always, evermore, continually; *–լիզ a.* always licking; *s.* vampire, blood sucker; *–խառնիմ vn.* to be joined, united, mixed together; *–ծիծաղ a.* ever-smiling, cheerful, pleasant, merry, gay; *–ծոյ a.* fellow; *–ծուփ a.* always fluctuating, agitated, troubled; *– ի փրփրադէզ կոհակաց*, ever beaten by the foaming waves; *–կայ a.* ever-living, imperishable, everlasting, permanent, perpetual; *ad.* continually, always, incessantly; constantly, eternally; *s.* epact; *gr.* preter-imperfect; *ast.* celestial hemisphere; *–կայանաւ* S. *–կայիմ*; *–կայեմ, եցայ vn.* to confirm, to affirm; to eternize, to perpetuate; *–կայիմ, եցայ vn.* to be permanent, stable, to continue, to last, to be perpetual, to endure for ever; *–կայութիւն* S. *Աշխենհաւորուն*; *–կատար s. gr.* preter-perfect or compound; aorist; *–կարգեմ va.* to add, to subjoin, to conjoin; *–կարգութիւն s.* perpetual order; continuation; *–կէզ a.* perpetually burning or burnt; *–կիրթ a.* very erudite, learned; *–կից a.* adjoining, contiguous, joined, united, connected; accessory; *– մասնիկ gr.* particle, affix, suffix; *–ք*, accessories; attendant circumstances; *–կոծ* S. *Յա-*

